

ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»  
ԵՎ ՍԵՊԱԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

(Հայկի և Հայկյանների առաջապի պատմականության և  
գարգացման փուլերի խնդիրը)<sup>1</sup>

ՀԳԱ. աղաղեմիկոս Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մ. թ. ա. IX—VII դդ. Հայկական լեռնաշխարհում ծաղկած Ուրարտու պետությունը, ինչպես և հինարեելյան շատ ուրիշ պետություններ ու հասարակություններ (Շումեր, էլամ, Խաթթի, Միտաննի և այլն) անհայտ էին մնում գիտությանը մինչև XIX դարի երկրորդ կեսը և XX դարը, երբ հնագետների ջանքերով հայտնաբերվեց նրանց նյութական մշակույթը, ապա և վերծանվեցին նրանց թողած սեպագրական հուշարձանները: Մովսես Խորենացին ևս, հին և միջնադարյան ուրիշ հեղինակների նման, ոչինչ չի իմացել այդ երկրների, մասնավորապես՝ Ուրարտուի, գոյության մասին:

Այսուհանդերձ, նրա «Հայոց պատմության» Առաջին գրքի շարադրանքում առկա են մի շարք դրվագներ, որոնք, անկախ հեղինակի պատկերացումներից, մասամբ ակներևաբար, մասամբ էլ հավանականության տարբեր աստիճաններով, արտացոլում են Ուրարտուի և նրա ժամանակաշրջանի իրողություններն ու իրադարձությունները:

1. Հայտնի է Մովսես Խորենացու հատուկ հետաքրքրությունը իր շարադրանքի հետ կապվող քաղաքների, ամրոցների, ջրանցքների, կոթողների, արձանների և նյութական մշակույթի այլ տեսակների նկատմամբ: Պատմաճայրը ոչ միայն հիշատակում է դրանք, այլև հնարավոր դեպքերում նկարագրում անհրաժեշտ մանրամասնություններով: Նրա նկարագրություններից ընթերցողը հստակ տեսողական պատկերացումներ է ստանում: Այդպիսիք են, օրինակ, Երվանդաշատի, Թեոդոպոլիս-Կարինի, Վան քաղաքի նկարագրությունները:

Վանի կապակցությամբ Մովսես Խորենացին նախ նկարագրում է տեղանքը, ապա հսկայական «ամբարտակը», ինքը՝ քաղաքը, նրա միջնաբերդը, ժայռափոր սրահները և, վերջապես, ժայռի հարթեցված մակերեսի վրա փորագրված սեպագրական արձանագրությունները: Սրանցից շատ բան մեր ժամանակներին է հասել երկրի երեսին, շատ բան էլ պեղված-լույս աշխարհ է հանված հնագետների կողմից, և ակնհատեսներն ու մասնագետները խոսում են Պատմաճայր նկարագրությունների ճշգրտության մասին: Մեզ հայտնի է, որ ույզ ամենը արդյունք էր Ուրարտուի թաշվորների շինարարական գործունեության, որն սկսել էր դեռևս մ. թ. ա. IX դարի երրորդ քառորդում Սարգուրի I-ը և որին մեծ ծավալ էր տվել մասնավորապես Մենուան (մ. թ. ա. 810—786 թթ.): Վերջինս, բացի այլևայլ շինություններից, կառուցել է նաև «ամբարտակ» կոչվող լճի՝ 70 կմ երկարություն ունեցող հոսակավոր, մինչև մեր օրերը պահպանված ջրանցքը, որը ջուր էր

<sup>1</sup> Հորվածը ներկայացնում է 1991 թ. հունվարի 25—26-ին Փարիզում կայացած «Moise de Khorène et l'histoire armenienne des origines» — «Մովսես Խորենացին և հայ պատմության ակունքները», միջազգային գիտաժողովում ընթերցված՝ «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ուրարտուն» զեկուցման ընդլայնված և լրացված տարբերակը:

մատակարարելու մայրաքաղաք Տուշպային, այսինքն՝ Վանին, և որի պատերը կողմող վեմերի կամ շրշտիա ժայռերի վրա բազմաթիվ տեղերում շինարար թաղավորը թողել է իր արձանադրությունները, նշելով նրանցում ջրանցքի կառուցման փաստը և ջրանցքն իր անունով կոչելու հանդամանքը<sup>2</sup>։

Որե՛ք քաղաքի նկարագրությունը տալիս, Մովսես Խորենացին միշտ առաջին հերթին հիշատակում է, թե ով է այն հիմնադրել ու կառուցել։ Արդեն ասվել է, որ Ուրարտուի գոյությունը մասին նա պատկերացում չի ունեցել, ուստի և չէր կարող Վանի կառուցումը վերադրել Մենուային կամ մեկ ուրիշ ուրարտական թաղավորի։ Գուցե նա կարող էր վերադրել այդ կառույցները հայոց նահապետներից որե՛ք մեկին, ասենք, Արամին կամ նույն Արա Գեղեցիկին և այդ, թերևս, մոտ կյիներ նրա սրտին։ Սակայն նա այդպիսի հնարավորություն չի ունեցել, քանի որ իրեն հայտնի ժողովրդական ավանդությունը քաղաքի ստեղծումը վերադրում էր Ասորեստանի թագուհի Շամիրամին<sup>3</sup>։ Այդ ավանդությունը բազկացած էր կրկու տարրից, որոնք Պատմահորն էին հասել տարբեր աղբյուրներից։ Մեկը նրանցից Արա Գեղեցիկի և Շամիրամի ընտրելագույն պիտակությունն է, որի աղբյուրը, ըստ Մովսես Խորենացու շարադրանքի, Մար Աբաս Կապինայի մատյանն է, մյուսը՝ Շամիրամի հետ առնչվող տեղական առասպել-ավանդությունը, որից մեզ, դարձյալ Մովսես Խորենացու շնորհիվ, առանձին մանրամասնություններ են հասել։ Ինքը Պատմահայրը որոշակիորեն տարբերում է այդ առասպել-ավանդությունը հիշատակված պիտակությունից, նշելով նրանց պահպանող աղբյուրները. «Ճե առասպելք աշխարհիս մերոյ զբազմահմուտ Ասորին (այսինքն՝ Մար Աբասին—Գ. Ս.) արդարացուցանեն», դրում է նա և խոսույն ավանդույնում այդ տոսպակ-ավանդությունից մի քանի փոշրանքներ. «Աստ ուրման զմահն ասել Շամիրամայ, և զհետևակ փախուստն, և զպատգումն և զիղձս ջրոյն և զսրբումնն, այլ և ի մոտ հասանել սուսերատորաց» և զլուռութան ի ծով, և բուն ի նմանէ. «Ուլունք Շամիրամայ ի ծով»։ Այլ թէ ախորձես տասպակլ և Շամիրամ քար առաջին քան զնորէ» (Ա, 18)։

Այս տեղական տոսպել-ավանդությունը, բնականաբար, շատ ավելի փարթամ եղած պիտի լինի, քան պատկերանում է մեզ Մովսես Խորենացու պահպանած փոշրանքների հիման վրա։ Մեր օրերին է հասել «Շամիրամա ջուր» անվանումը, որը ժողովուրդը տալիս է Մենուայի կառուցած ջրանցքին<sup>4</sup>։ Մովսես Խորենացու մոտ «Շամիրամի քաղաք» անվանված Վանը այդպես է անվանում նաև Թովմա Արծրունին, որը, բացի այդ, հիշատակում է նաև «Շամիրամ ըւրդը», իսկ Ճվաշ գավառում՝ «Շամիրամ ամրոցը»<sup>5</sup>։

<sup>2</sup> Տե՛ս Գ. Ա. Мелникшвили. Урартские клинообразные надписи (УКН). М., 1930, №№ 43—56.

<sup>3</sup> Թերևս, այդ կառույցները, Մովսես Խորենացու օրոք ավելի բանակությամբ և առավել լավ պահպանված լինելով, քան այսօր, նրա աչքին նաև խորթ են թվացել հայկական շինարարական ոճին, ինչուս և այժմ մեր հնադեպերին են ներկայանում Գուցե դրանով են մասամբ թևադրված նրա այսպիսի արտահայտությունները այդ կառույցների կապակցությամբ. «Իսկ զծայր քաղաքին և որ ինչ ի նմա հրաշակերտութիւնք՝ բազմաց ի մարգկանէ ոչ հասու լեալ, և ոչ պատմել է կարողութիւն... Որոյ որպիսութիւն զբուժեալն յօրինուածոյ ոչ ի լսելիս մեր հառեալ ճշմարտութեամբ յումեքէ, և ոչ մեք ի պատմութիւնս հիսել հաւնիմք և այլն (Ա, 16)։ Եվ այս խնդրում առանձնապես կողմնորոշող պիտի լինեն նրա համար Վանա ժայռի հսկայական սևոպարական արձանագրությունը՝ Արգեշթի I-ի (մ. թ. ա. 786—764 թթ.) հայտնի «Խորհրդանշան տարեգրությունը», որի մասին նա գրում է. «Իսկ զամենայն երեսս քարին իրբու զբաւ շմոմ հարթեալ՝ բաղում գիրս ի նմա գրեաց (Շամիրամը—Գ. Ա.) որոյ հայկցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ» (նույն տեղում)։

<sup>4</sup> Գ. Բ. Սարգսյանի և Գ. Բ. Սարգսյանի. Նրկեր. I, Երևան, 1978, էջ 383, 403.  
<sup>5</sup> Թովմայի վարդապետի Արծրունույ Պատմութիւն տանն Արծրունեաց. ՍՊՔ, 1887, էջ 258, 270.



«Շամիրամ գլուղը» Մշո դաշտում հիշատակում է Գար. Սրվանձտյանցը<sup>6</sup>: Վանի մոտ Թովման հիշատակում է Լեղք դուզը (Լեզուոյ գեաւոյն) կապելով այն Շամիրամի գինվորներից Արա Գեղեցիկի ստացած վերքերը լիզել-սպիացնելու հետ<sup>7</sup>: Արալեզները (աուլեզները) հիշատակվում են նաև Փավստոսի (Ն, 36) ու Նղնիկի (Ա, 24) մոտ և Անանունի «նախնական պատմութիւն» մեջ (գլուխ Ա): Որ վաղ միջնադարում ժողովրդի մեջ դեռևս պատմվում էր Արա Գեղեցիկի հետ կապված բուն առասպելը՝ անուղղակիորեն հուշում է նաև Արայի լեռան հիշատակումը VII դարի Աշխարհացոյցում<sup>8</sup>:

Այս բոլորը ավելի ցցուն, հարուստ ու հստակ լինելով Մովսես Խորենացու ապրած V դարում, բավական հիմքեր են տվել նրան Վան քաղաքի հիմնադրումը վերադրելու Շամիրամին և ոչ՝ մեկ ուրիշի, իսկ Ուրարտուի մասին նա, ինչպես ասվեց, տեղեկութուն չունի և չէր կարող ունենալ:

2. Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւն» մեջ ուրարտական ժամանակաշրջանին առնչվող նյութի առկայութիւնը տեսակետից Շամիրամի հետ կապված հաղորդումները մեզ ավելի հեռուն են տանում, քան սոսկ Վան քաղաքի հիմնադրման թեման է: Հարցը հետևյալն է: Ինչ ճանապարհով և երբ է Շամիրամի կերպարը եկել-մտել հայկական միջավայր: Ամենահիշտ սյատաւխանը կլինի, թե՛ անտիկ շրջանի այն գրականութունից, որում Շամիրամի (Սեմիրամիսի) առասպելը բավական մեծ տարածում ունի: Հիրավի, Մովսես Խորենացու շաբաղբում՝ Շամիրամի հետ կապված առասպելների մի խոշոր մասը գալիս է անտիկ գրականութունից:

Անտիկ գրականութիւնը մեջ այդ առասպելների գլխավոր ակունքը մ. թ. ա. V դարի հույն հեղինակ, պարսից թագավորի բժիշկ Քունսիասի երկն է, որը մեզ չի հասել, բայց որի մեզ այստեղ հետաքրքրող մասերը վերապատմել է մ. թ. ա. I դարի հույն հեղինակ Դիոդորոս Սիկիլիացին իր «Պատմական գրադարանի» II գրքի 4—20 գլուխներում<sup>9</sup>: Մովսես Խորենացին գուցե անմիջականորեն օգտված լինի այդ շարադրանքից, սակայն իր տեղեկութունների մեծ մասը նա քաղել է IV դարի հեղինակ Նվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնից»: Այստեղից են գալիս Շամիրամի ամուսին Նինոսի, ինչպես և Շամիրամի և Զրադաշտ մոգի մասին տեղեկութունները, Շամիրամի հնդկական արշավանքի, իր որդիներին կոտորելու և նրանցից մեկից՝ Նինվասից սպանվելու պատմութիւնը, ինչպես և Նինվասի Զամես երկրորդ անվան և Աբրահամին ժամանակակից լինելու մասին հաղորդումները: Նվսեբիոսի միջնորդութիւնը է մեջբերում Մովսես Խորենացին Կեփաղիոնի այս հաղորդումները Շամիրամի մասին (Ա, 18)<sup>10</sup>, թեև այդ կապակցութիւնը վերջերս որոշ մասնակի կասկածներ են հայտնվել<sup>11</sup>:

Սակայն բացի այս բոլորից, Մովսես Խորենացին շրջաբեր է շարա-

<sup>6</sup> Գար. Սրվանձտյանց. նշվ. աշխ., էջ 49:

<sup>7</sup> Թովմա Արծրունի, էջ 215: Տե՛ս նաև Մ. Արեղյան. Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմութիւն մեջ. Վաղարշապատ, 1899, էջ 529:

<sup>8</sup> Տե՛ս Մ. Տ. Նրեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 1963, էջ 110:

<sup>9</sup> Diodorus of Sicily in twelve volumes, I, Books I and II, 1—34, London, 1968.

<sup>10</sup> Նսեբի Պամփիլիայ Կեսարացու ժամանակակիցը. Վենետիկ, 1818, մասն Ա, էջ 84, 92, մասն Բ, էջ 65: Տե՛ս նաև Գ. Халатянц, Армянский эпос в Истории Армении. Моисей Хоренского, ч. II, М., 1896, с. 37.

<sup>11</sup> Տե՛ս Զ. Ն. Ստոյան. Մովսես Խորենացիի «գասական» ավանդութիւնը Հայոց պատմութիւն Ա գրքի 5-րդ գլուխին մեջ.— Պատմա-բանասիրական հանդես, 1992, թիվ 1, էջ 32:

զրույթ, որոնք վերաբերում են հայկական միջավայրի հետ Շամիրամի առնչություններին: Ինչպես արդեն ասվեց վերը, զրանք են Արուսի և Շամիրամի առասպելը, Վան քաղաքի կառուցման նկարագրությունը և Շամիրամի՝ Հայաստանում, Վանա լճի ափին իր վախճանը գանկու մասին ավանդությունը:

Մրանցից միայն երկրորդ գրվածքի՝ Վան քաղաքի շինարարության կապակցությամբ է, որ գուցե կարելի է նշմարել անտիկ դրահանության, այն է՝ Գիտություն Սիկիլիայու հազարամյակների ազդեցությունը, սրտնք, սակայն, բնույթով միանգամայն արտերկր են նվերիստից եկող սեզեկություններին: Վերջիններս կոնկրետ հազարամյակ են Շամիրամի կյանքի ու շրջապատի (Նինոսի, Ջյուլյաշտի, Նինվասի և այլոց) մասին, իսկ Գիտություն վերագրելիները սոսկ նկարագրական, ոճական տարրեր են, որոնք կարող են փոխառված լինել նրա՝ Շամիրամի կողմից Բարեկուն, էկրատանա քաղաքների շինարարության կազմակերպումն ու իրականացումը պատկերող դրվագներին, մինչդեռ Մովսես Խորենացու մոտ վերաբերում են Վան քաղաքի շինարարության կազմակերպմանը և իրականացմանը<sup>12</sup>, Գրանք, Լթև, իրոք, կան, ամենևին չեն խանդարում Վան քաղաքի, նրա միջնաբերդի, նրա շրջակայքի, հայտնի ամրաբրտակ-չրանցքի նկարագրություններին միանգամայն հարողոտ լինելու այն պատկերին, որ հասել է մեր օրերին և կամ լույս աշխարհ է հանվել հնագիտի բրիչի օգնությամբ: Այդօրինակ, բայց շատ ավելի ակնառու «սճեկան» փոխառությունները Մովսես Խորենացու մոտ հոճախ են հանդիպում և կրեք չեն միասում դրանց օգնությամբ շարադրված նկարագրությունների հարազատությանը բուն շարադրելի նյութին<sup>13</sup>:

Այսպիսով, ինչպես արդեն ասվեց վերը, Շամիրամի մասին Մովսես Խորենացու պատմածը կարելի է բաժանել երկու մասի, որոնցից մեկը գալիս է անտիկ դրահանությունից, իսկ մյուսը՝ զուտ տեղական է (Վանի կառուցման նկարագրության կապակցությամբ վերը նշված երևույթի հաշվառմամբ):

Հարց է ծագում, իսկ Շամիրամի մասին հայկական նյութը արդյո՞ք իր հերթին որևէ ազդեցություն չի դրած անտիկ դրահանության համապատասխան լեգենդի վրա: Այստեղ հանդիպում ենք մի քանի փաստերի, որոնք այդպիսի ազդեցության օգտին են խոսում: Նախ, ինքը Գիտությունը բացմամբ է, որ Ասորեստանի Նինոս արքան, զեռևս Շամիրամ-Սեմիրամիսի հետ ամուսնանալուց առաջ, արշավել է Հայաստանի դեմ և հպատակեցրել նրա թագավոր Բարզանեսին: Գրանից առաջ նա արշավել էր Երաբաների դեմ, որոնց թագավորին Գիտությունն անվանում է՝ Առաջուկ — Արիստոս (II, 1): Ն. Աղոնցն այստեղ անունների շփոթություն է ենթադրում, Արիստոսին համարելով Արա Գեղեցիկի հետ, որ միանգամայն հնարավոր է<sup>14</sup>: Մի այլ տեղ Գիտությունը պատմում է, թե Շամիրամը Հայկական լեռներից մի հսկայական (130×25 ոտնաչափ մեծությամբ) քար է հայթայթել Բաբելոնիալում որպես կոթող կանգնեցնելու համար, որը և հնում համարվել է աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը (II, 11):

Ն. Աղոնցը ուշադրություն է դարձրել Բեռլինի պապիրուսների հավաքածուից հունարեն մի պատառիկի վրա (հրատարակված Վիլկենի կողմից

<sup>12</sup> Տե՛ս Դ. Халатянц. Указ. соч., с. 32 и сл. Նույն տեղում Գր. Խալաթյանցը նմանություններ է նշում նաև Հովսեփոս Փլավիոսի հետ, որ նույնպես հնարավոր է:

<sup>13</sup> Տե՛ս, օրինակ, Գ. Խ. Սարգսյան. Աղբյուրների օգտագործման եղանակը Մովսես Խորենացու մոտ. — «Բանբեր Մատենադարանի», № 3, 1956, էջ 31 և հտ.:

<sup>14</sup> Ն. Աղոնց. Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում: Հայաստանի պատմություն: Ակունքները X—VI դդ. մ. թ. ա., Երևան, 1972, էջ 376: Ն. Աղոնցի երկի 1946 թ. հետմահու լույս տեսած ֆրանսերեն հրատարակության մեջ սխալմամբ՝ 'Aραϊος:



1893 թ.), որտեղ պատմվում է, թե ինչպես երիտասարդ Նինոսը սիրահարված է դեռատի իր զարմուհուն, բայց ստիպված է լինում սպասել նրա հասունացմանը: Այդ ընթացքում նա արշավում է Հայաստան: Տեքստն աղճատված է, բայց ընթեռնելի են՝ *Ἰνός* (որ, ըստ Ն. Ադոնցի, կարող է լինել *Ի*՝ էրոս աստվածը, և՛ Արա Գեղեցիկը) և քիչ հետո՝ *Ἀρσένι* բառերը<sup>15</sup>: Այստեղ ևս կարելի է ենթադրել հայկական առասպելի տարրերի ներթափանցումը անտիկ դրականության ոլորտը:

Վերջապես, Ա. Տեր-Ղևոնդյանը դրել է Մասուզու մի հատվածի մասին, որտեղ խոսվում է Շամիրամի (Սամիրամ) Նինվեում թագավորելու և շրջակա երկրները, այդ թվում՝ Հայաստանը, նվաճելու մասին: Սրա որդի Արսիսի օրոք հայոց թագավորները իրենց հերթին նվաճում են Նինվեն և նրանից հետո իշխած 20 թագավորներ հարկ են վճարում հայերին: Ա. Տեր-Ղևոնդյանը ենթադրում է, թե Մասուզին այս զրույցը գրի է առել իր՝ Հայաստան այցելության ժամանակ<sup>16</sup>: Չի կարելի բացառել, սակայն, որ այն Լկել-հասել է նրան անտիկ գրականությունից:

Այսպես թե այնպես, բայց Մասուզու տարբերակը դրդում է նորոգի նայել Մովսես Խորենացու տարբերակի որոշ մանրամասնություններին: Մասուզու մոտ առկա՝ հայերի ունեցած գաղափարը կիսաթաքնված վիճակում կա նաև Մովսես Խորենացու մոտ, նրա շարձարած երկու դրվագում: Առաջինը հայերի ընդվզումն է Արալի մահվանից հետո, որը Շամիրամը խաղաղեցնում է Արալի վերակենդանանալու պատրանքով, և ոչ ուղղակի ուժով, երկրորդը՝ Շամիրամի մահվան պարագան Հայաստանում և ոչ թե մի այլ տեղ, որպիսի դրվագի մեջ անհայտ է մնում, թե ովքե՞ր էին նրան սպանողները: Եթե կամուրջ ձգենք այս երկու դրվագների միջև, ապա ուրվագծվում է առասպելի մի նոր տարբերակ՝ հայերի եղբայրակիչ հաղթանակով, որը մոտ է և՛ Մասուզու նկարագրածին և՛, ընդհանրապես, ազգային մի առասպելի ոգուն:

Շամիրամի առասպելների հետադոտող Վիլհելմ Այլերսը Հայաստանն անվանում է *das klassische Land der Semiramis-Erinnerungen*—«Շամիրամական հուշերի դասական երկիր»<sup>17</sup>, անշուշտ նկատի ունենալով վերն ասվածի ամբողջությունը և մեջ բերելով Շամիրամին Հայաստանի հետ կապող տվյալներ: Միևնույն ժամանակ նա հանգամանորեն անդրադարձել է գիտության մեջ Շամիրամ-Սամիրամիսի պատմական նախատիպ համարվող Ատորեստանի թագուհի Սամմուրամաթի (մ. թ. ա. IX դարի վերջերը) խնդրին:

Մտահոգվելով Սամմուրամաթ անվան ծագման հարցով, հեղինակը գրտնում է, որ այն առայժմ բացատրված չէ, և մերժում զանազան առաջարկված ստուգաբանություններ, այդ թվում և Լեհման-Հաուպտի (գիտության մեջ բավական տարածում գտած)՝ Սամմուրամաթին բաբելոնական ծագում վերագրելու վարկածը: Այլերսի ենթադրությունը տանում է նրան ավելի շուտ դեպի հյուսիս, դեպի Հայկական լեռնաշխարհը<sup>18</sup>:

Սամմուրամաթին հազիվ թե վերագրելի են այն հսկայածավալ գործերը և սահմուկեցուցիչ արարքները, որ պատմվում են Շամիրամ-Սամիրամիսի մասին, սակայն դա այնքան էլ կարևոր չէ: Սամմուրամաթին առանձնացնում էր արդեն այն հանգամանքը, որ նա եզակի երևույթ է եղել ոչ միայն ասորեստանյան, այլև ընդհանրապես հինարևելյան միջավայրում

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 375 և հտ.:

<sup>16</sup> Ա. Ն. Տեր-Ղևոնդյան. «Արա և Շամիրամ» առասպելի մի արձագանքը արաբ պատմիչ Մասուզու մոտ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 4, էջ 251:

<sup>17</sup> W. Eilers. Semiramis. Entstehung und Nachhall einer altorientalischen Sage. Wien, 1971, S. 3.

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 45—46:

(և՛թի բացառնք Եգիպտոսի թագուհի Խաթշիփսութին), լինելով ինքնիշխան կին-պահակալ՝ իր մանկահասակ որդի Ադազներարի II-ի խնամակալ:

Սամմուրամաթի անունը մեղ հասել է Լրկու արձանագրության մեջ: Գրանցից մեկը՝ Լրկու օրինակով, փորագրված է Նարու ասածուն պատկերող արձանների վրա, որոնք պեղվել են Կալխու-Նիմրուդ քաղաքում: Գրանք ձոնել է մարդի կառավարիչ Բել-Տարծի-Իլուման, գրել տալով հետևյալը.

a-na balaṭ <sup>md</sup>Adad-nerarī šar <sup>kur</sup>Aššur bell-šu  
u balaṭ <sup>f</sup>Sa-am-mu-ra-mat sinnišat ekalli bēlti-šu

«Ի ուղտիջուան Ադադ-Ներարիի, Ասորեստանի արքայի, իր տիրոջ, և ուղտի-թյուն Սամմուրամաթի, պալատային տիկնոջ, իր տիրուհու»:

Այստեղ սպասված չարատ «թագուհի» բառին փոխարինում է sinnišat ekalli «պալատային տիկին» արատհայտությունը, սակայն վերջինս այլ Խագուհիների նկատմամբ էլ է կիրառվել, այն դեպքում, երբ շեշտվել է, թե խոսքը թագավաճանդի մորն է վերաբերում<sup>19</sup>: Որ խոսքը հիրավի թագուհու մասին է, երևում է նաև այն բանից, որ ձոնողը Ադազներարիին և Սամմուրամաթին հավասարապես «իր տեր» և «իր տիրուհի» է անվանում:

Երկրորդ արձանագրությունը իրեն՝ Սամմուրամաթինն է.

sa-lam <sup>f</sup>Sa-am-mu-ra-mat  
sinnišat ekal [<sup>md</sup>Šamšil]<sup>š1</sup>.<sup>d</sup>Adad  
šar kiššati šar mat [<sup>d</sup>Aš]-šur  
<sup>f</sup>ummi [<sup>d</sup>Ad]ad-nerarī  
šar kiššati sar [mat] <sup>d</sup>A-šur  
<sup>f</sup>kall-lat [<sup>d</sup>Š]ul-ma-nu-ašarēd  
šar kib-rat erbetti<sup>11</sup>

«Կոթողը Սամմուրամաթի,  
պալատային տիկնոջ [Շամշի]-Ադադի,  
ամենայնի արքայի, [Ասոր]եստանի արքայի,  
մոր [Ադ]ադ-Ներարիի,  
ամենայնի արքայի, Ասորեստանի արքայի,  
[հ]արսի (1) [Ս]ալմանասարի,  
չորս ծագերի արքայի»:

Չիշատակված արքաների իշխանության տարեթվերն են. Սալմանասար III-ի՝ մ. թ ա 858—824 թթ., Շամշի-Ադադ V-ի՝ մ. թ. ա. 823—810 թթ., Ադադ-Ներարի III-ի՝ մ. թ. ա. 809—782 թթ.: Սամմուրամաթը ապրել է այս երեք թագավորների օրոք, իսկ նրա կոթողը կանգնեցված է իր որդի Ադադ-Ներարիի օրոք, որը գահակալել է 5 տարեկան հասակում<sup>20</sup>, Սամմուրամաթի գահակալությունը տևած կլինի մեկ և կես տասնյակ, գուցե և ավելի տարիներ:

Ինչպես արդեն ասվեց, Սամմուրամաթին չեն պատշաճում (գոնե այն տեղեկությունների սահմաններում, որ մենք նրա մասին ունենք) Սեմիրամիս-Շամիրամին վերագրվող գործերը, սակայն նրա՝ կնոջ համար եզակի դիրքի բերմամբ արդեն նրա շուրջը կարող էին հյուսվել զանազան պատմություններ, որոնք հեաղայում, գունազարդվելով, այն ձոխ առասպելների տեսքը պիտի ստանային, որը առկա է անտիկ և հայ գրականության

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 36 և ծան. 54:  
<sup>20</sup> Նույն տեղում, էջ 37:



մեջ, Այդ պատմությունների մի ինքնուրույն շիթ, անտիկ գրականության մեջ ներթափանցած շիթերից անկախ մտնելով հայկական հողը, այստեղ տեղայնացվել է: Սակայն դրա համար բավական ժամանակ էր պետք և հազիվ թե Շամիրամի կերպարի գունազարդումը տեղի ունեցած լինի նրա գահակալությանը հաջորդած մ. թ. ա. VIII դարում, մանավանդ նրա առաջին կեսում, երբ, ի հակադրություն առասպելում պատկերվածի, Վանի թագավորությունն էր, որ գերակշռում ու հաղթում էր թուլացած Ասորեստանին: Պետք է ընդունել, որ այդ կարող էր տեղի ունենալ ավելի ուշ, ըստ որում կամ արարական միջավայրի մասնակցությունը ու միջնորդությամբ, կամ արդեն հայկական միջավայրում:

Ինչ վերաբերում է Մովսես Խորհնացուն, ապա նա, շուրջ մեկ հազարամյակ անց, ի մի հավաքելով Շամիրամի առասպելի անտիկ և հայկական թելերը, կրկին միահյուսել է դրանք իր «Հայոց պատմության» մեջ:

Հետաքրքրական է տեսնել, թե ինչպես է թվագրում Շամիրամին ինքը Մովսես Խորհնացին: Շամիրամը Արա Գեղեցիկի ժամանակակիցն է, որը Հայկյանների յոթերորդ սերնդին է պատկանում: Քանի որ Պատմահայրը տալիս է Հայկյանների անընդմեջ ցանկը, ապա կարելի է որոշել նաև, թե նրանցից որի՞ ժամանակի հետ է համընկնում Շամիրամի կերպարի ամենավաղ հնարավոր իրական մուտքը Հայաստան: Եթե Սկայորդին, ասենք, լինելով, ըստ Մովսես Խորհնացու, Հայկյանների 35-րդ սերնդի ներկայացուցիչը և Ասորեստանի Սենեքերիմ (Սինախերիբ) թագավորի և նրա հաջորդի ժամանակակիցը, այսպիսով, ապրել է մ. թ. ա. VII դարի առաջին կեսում, իսկ Շամիրամի կերպարը մուտք է գործել Հայաստան ամենավաղը դրանից շուրջ 100 տարի առաջ, ուրեմն այդ տեղի է ունեցել Հայկյանների մոտավորապես 31-րդ կամ 32-րդ սերունդների ներկայացուցիչների օրոք: Ուրիշ խոսքով ասած, յոթերորդ սերնդին պատկանող Արային Շամիրամից բաժանում է առնվազն 25 սերունդ:

Արդյոք որևէ իմաստ ունեն նման հաշվումները: Մեր կարծիքով՝ ունեն: Արայի ժամտնակը ամենևին չպետք է կապել Շամիրամի ժամանակի հետ, որովհետև Արան ընդհանրապես պատմական ժամանակ չունի, լինելով հայերի հնագույն աստվածներից մեկը՝ մեռնող և հարություն առնող, այսինքն՝ բնության արթնացող ուժերի աստվածություն: Արայի ծագումը կարելի է թվագրել հայերի՝ հնդեվրոպական ընդհանրությունից անջատվելու, նույնիսկ դեռևս նրա մեջ ընդգրկված լինելու ժամանակով: Շամիրամի կերպարը հետագայում եկել-միահյուսվել է Արայի առասպելին:

3. Նմանօրինակ պատկեր է ներկայացնում նաև Հայկի ու Բելի առասպելը: Հայկը, հայերի առասպելական անվանադիրը, Արայի նման, հայերի հնագույն աստվածներից մեկն է, նա նույնքան հին է, որքան, «հայ» ցեղանունը, որից և ծագել է «Հայկ» անունը: Բելի պարագան, սակայն, միանգամայն այլ է: Նշենք, նախ և առաջ, որ Բելը, ինչպես և Հայկը, Աստվածաշնչում չկան այն դերերում, որոնցում նրանք հանդես են գալիս Մովսես Խորհնացու մոտ: «Հայկ» է անվանված Աստվածաշնչում Օրիոն համաստեղությունը (Ծայրի, ԺԳ, 10, Հովբ, ԼԸ, 31), իսկ Բելը Բաբելոնի աստվածներից մեկն է (Ծայրի, ԽԶ, 1, Երեմիա, Մ, 2, ՄԱ, 44): Մովսես Խորհնացին է, որ ձգտելով Աստվածաշնչի մակարդակով հիմնավորել նրանց ժամանակակից լինելը, ճույնաբերել է Բելին ներբողի հետ, որն Աստվածաշնչում Հայկի հայր Թորգոմի ժամանակակիցն է: Աստվածաշնչում Բելը ներբողի հետ ոչ մի կապ չունի: «Բել» արքայդերեն նշանակում է «տեր» և կիրառվել է Միջագետքում որպես Բաբելոնի գլխավոր աստված Մարդուկի մշտական ածականը, այնուհետև նաև որպես նրա զուգահեռ անունը<sup>21</sup>: Ի դեպ, երեք աստվածաշնչական հիշատակումներից մեկում (Երեմիա, Մ, 2) Բելը անվանված է Մարդուկի (Մերոզաք) կողքին:

<sup>21</sup> Sht. Der Alte Orient in Stichworten. Lpz., 1978, S. 71.

Մովսես Խորենացու մոտ Բելլը խիստ բազմաբովանդակ է: Նա նույնացվում է, ինչպես ասվեց, ներբրովթի հետ և այդ կապակցությամբ համարվում է հեթոմպացի, իսկ մյուս կողմից՝ նաև հունական աստված Կոռնոսի՝ Ջևսի հոր հետ (Ա, 7): Այնուհետև նա հանդես է գալիս որպես «ամբողջ երկրի» տիրակալ, և պարզվում է, որ նրա նստավայրը Բարեյոնն է: Այս վերջինը մոտ է և՛ Աստվածաշնչին, և՛ իրականությունը, որովհետև Բել-Մարդուկը կամ Բել-Արդ, հարց է ծագում, թե պատմականորեն ե՞րբ կտրող էր այդ բարեյոնյան, ավելի լայն ասենք՝ միջազևաքյան աստծու անունը և կերպարը ներթափանցել հայկական միջավայրը և կցվել Հայկի առասպելին որպես բաղադրատարր: Եթե, իհարկև, այն ներմուծված չէ հենց Աստվածաշնչի, որը մենք լիովին բացառել չենք կտրող, եթե Շամիրամի կերպարի մուտքը համար մենք ունենք դոնև որպես ամենավաղ ժամանակագրական սահման՝ terminus ante quem non — Մամուրամաթ թագուհու ժամանակը, ապա այստեղ սյուռալի ժամկետ չունենք:

Կա, սակայն, մի փաստ, որը կարող է որոշ չափով կողմնորոշիչ դեր կատարել: Դա Մարդուկ աստծու հիշատակումն է Թեյշեբախի-Կարմիր բլուրում գտնված՝ Ռուստ II ուրարտական թագավորի մի սևագրակաշն արձանագրության մեջ, որը թվագրվում է մ. թ. ա. VII դարի կեսերով<sup>22</sup>:

Արձանագրության պահպանված մասը պարունակում է հիմնականում անեծքի բանաձևը, որում արձանագրության հեղինակը ապառնում է այն փշաղնողներին, տեղահանողներին, յուրացնողներին և այլն: Սովորաբար նա այդպիսիների վխներին է կուտակում ուրարտական երեք գլխավոր աստվածների՝ Խալգի, Թեյշեբայի և Շիվինի ցասումն ու վրեժխնդրությունը: Սույն արձանագրության մեջ, սակայն, դրանց ավելացված է Մարդուկ աստվածը՝ գաղափարագրով. [DHal-di-se DIM-še DՄTU]-še DMARKUK-še — [(աստված) Խալգին, (աստված) Թեյշեբան, (աստված) Շիվինի] ն, (աստված) Մարդուկը ...»:

Կարծիքներ կան, որ Մարդուկի պաշտամունքը հայտնվել է Արարտյան դաշտում գերեվարված բարեյոնացիների հետ (Ն. Հարությունյան) կամ, որ նրա գաղափարագրի տակ թաքնված է որևէ տեղական աստվածություն (Գ. Մելիքիշվիլի): Բոլոր դեպքերում Մարդուկի այստեղ հայտնվելը հատկանշական է: Այն, կարծես թե, ակնարկում է, թե ինչպիսի պատմական պարտազաներում կարող էր տեղի ունենալ Բել-Մարդուկ աստծու ներթափանցումը Հայկական լեռնաշխարհ՝ Ասորեստանի հետ բախումների պարագաներում: Դրանք սկսվել են մ. թ. ա. XIII դարում, երբ հզոր Ասորեստանի դեմ կանգնած էին դեռևս Նաիրի և Ուրուտարի հեղհեղուկ ցեղային միությունները և շարունակվել հզոր և հակահարվածի ընդունակ Վանի թագավորության օրոք: Այդ եռանդուն բախումների օւ շփումների շուրջը առաջացած ավանդույթներում Բել աստծու կողքին հանդես է եկել, գուցե, ուրարտական Խալգի գլխավոր աստվածը:

Երևի այդ ավանդությունները, ուրարտական էթնոսի՝ հայկականի մեջ տարալուծվելուն համընթաց, հայացվել են և միահյուսվել հայկական հնագույն աստված Հայկի շուրջը վաղուց ի վեր գոյություն ունեցած առասպելներին ու այդ վիճակում հասել Մովսես Խորենացուն<sup>23</sup>: Նման վարկածը, մեզ հավանական թվալով, ամենևին չի բացառում այլ մեկնաբանությունների հնարավորությունը: Նրա օգտին են խոսում, սակայն, այլ ժողովուրդների

<sup>22</sup> Г. А. Меликшивили. Урартские клинообразные надписи. Открытия и публикации 1954—1970 гг.—Вестник древней истории, 1971, 4, № 450.

<sup>23</sup> Հմմտ. Մ. Արևիկյան. Եզվ. աշխ., էջ 252 և հտ. «...Մի՞թե կարող չէ այդ գրույցի մեջ մնացած լինել Հայաստանի նախահայ բնակիչների՝ ուրարտացիների ասորեստանցոց դեմ մղած պատերազմների հիշատակը, որը հետո հայերը ժառանգել են ուրարտացիներից»:



առասպելարանությունների, ասենք, համաշխարհային ջրհեղեղի այն առասպելի օրինակը, որը զարգացման երեք փուլ է անցել՝ շումերական, քաղական և հրեական, ամեն մի փուլում փոփոխելով գլխավոր հերոսի անունը՝ Ջիուսուդրա-Ուտենապիշտիմ-Նոյ, և տեղայնացնելով առասպելի տոպոնիմիկան և այլ մանրամասնությունները:

4. Մեծ դժվարություններ է առաջացնում Մովսես Խորենացու մոտ պահպանված Արամի առասպելի պատմական մեկնաբանման փորձը: Թեև ոմանց թվում է, թե այստեղ մեկնաբանելու բան չկա՝ Արամը պարզապես այն Արրամու Ուրարտացին է, որը հիշատակվում է մ. թ. ա. IX դարի կեսերի ասուրական արձանագրություններում որպես Ուրարտուի առաջին թագավոր: Հիրավի, անունները գրեթե նույնն են և այս հանգամանքը ընդունակ է և՛ կողմնորոշելու, և՛ ապակողմնորոշելու: Գուցե Արամի առասպելը իսկապես հյուսված է Արրամու Ուրարտացու շուրջը: Սրա համար, եթե վերանանք անունների նույնությունից, իմ կարծիքով, զգացվում է նրանց հարազատությունը հաստատող լրացուցիչ պատմական փաստերի որոշակի պակաս:

Կամ գուցե մենք գործ ունենք անունների ոչ հազվադեպ հանդիպող պատահական նմանություն հետ: Այդ դեպքում, կարծում ենք, կարելի է ավելի սերտորեն հետևել Մովսես Խորենացու շարադրանքին: Արամին, որ Հայկյանների վեցերորդ սերնդի ներկայացուցիչն է, Արրամու Ուրարտացու ժամանակից բաժանում է շուրջ 25 սերունդ՝ գրեթե մեկ հազարամյակ: Այնուհետև, ըստ Մովսես Խորենացու, Արամը, Հայկից հետո, հայերի երկրորդ անվանադիրն է, նրանց «արմեն» ցեղանվան աղբյուրը: Գոնե այս երկու հանգամանքը դրգում են մտածելու, թե արդյո՞ք «Արամ» անունը իսկապես կապված չէ «արմեն»-ին նախորդած «արմ», «ուրում» («օրում») կամ ալլ ցեղանվանական ենթադրվող ձևերի հետ, ինչպես հետևում է Պատմահոր ասածից, և թե արդյո՞ք, այդպիսով, Արամն իսկապես հայկական հնագույն աստվածների թվին չի պատկանում՝ Հայկի և Արայի հետ միասին:

Կամ գուցե կա մի երրորդ մեկնաբանություն հնարավորություն: Այս հաջգերը մեզ համար տակավին բաց են մնում:

5. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» Առաջին գրքում շարադրված՝ Հայկ նահապետի և Հայկյանների տեղաշարժերի մասին ավանդությունը կամ առասպելը ամենատարբեր գնահատականների է արժանացել գիտական գրականության մեջ: Մենք հարում ենք այն տեսակետին, որ այդ նյութը իր հիմքում հնագույն ժազում ունի: Իհարկե, դարերի և հազարամյակների ընթացքում այն շերտակալել է այլևայլ տարրերով ու մանրամասներով, ենթարկվել ձևափոխությունների և նշանակալից չափով կորցրել իր նախնական պատկերը, բայց և այնպես պահպանել է հնագույն տարբերակի հիմնական գծերը: Մեր համոզումը դրանց իսկություն վերաբերյալ առավել ևս ամրապնդվում է, երբ հայտնաբերում ենք, որ նրանց տվյալները համընթաց են հնագույն, իրադարձություններին ժամանակակից՝ սեպագրական և այլ աղբյուրներին:

Մեր խոսքն այստեղ մասնավորապես Հայկի և առաջին Հայկյանների այն տեղաշարժերի մասին է, որոնք բավական մանրամասն նկարագրված են Մովսես Խորենացու, ինչպես և Սեբեոսի «Պատմությանը» կից մեզ հասած տարբերակներում: Հարց է ծագում. որքա՞ն պատմական հիմք ունեն այդ տեղաշարժերը, և եթե ունեն, ապա ո՞ր ժամանակների իրադրությունն են նրանք արտացոլում:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ ներկայացված է Հայկական լեռնաշխարհի բնակեցման ոչ թե մեկ, այլ երկու ալիք: Առաջին ալիքը, իբր, տեղի է ունեցել Հայկից երեք սերունդ ավելի վաղ և կապված է եղել աստվածաշնչական Սեմի՝ Նոյի որդու, և նրա որդի Տարբանի հետ:

Եթե որպես Հայկի ու Հայկյանների մասին տեղեկությունների աղբյուր Մովսես Խորենացին անվանում է Մար Արտա Կատինայի մատչանը, տպա Սեմի և Տարրանի պատմության կապակցությամբ նա հիշատակում է կրկու աղբյուր՝ հույն փիլիսոփա Օլիմպիոդորոսի բանավոր հաղորդումը և, զուգահեռաբար, ժողովրդական ավանդությունները: Այստեղ, սակայն, մեր նպատակից դուրս է այդ աղբյուրների էության մեջ խորանալը:

Այսպես, ուրևմն, ըստ «Հայոց պատմության» Ա. Կրքի 6-րդ գլխի, կրք նույն հասցեատեղ, որն այստեղ անվանված է Քսիստոթրես (որ, ի վերջո, շումիրական Զիուսուդրայից է դալիս), նավիլով Հայաստան, ցամաքի է հանդիպում, ապա նրա սրդիններից Սևմը հետախուղության է դնում դեպի հյուսիս-արևմուտք և հանդիպելով մի լեռան, անվանում է այն իր անունով Սիմ ու վերադառնում հարավ-արևելք, որտեղից կկիլ էր: Սակայն նրա որդի Տարբանը իր սրդինների հետ միասին բնակվում է այլ լեռան շուրջը և դավառը նրա անունով անվանվում է Տարավն, այսինքն՝ Տարոն (Տարան—Տարոն):

Նույն Ա. Կրքի 9—10-րդ գլուխներում պատմվում է Հայկի մասին, թե՛ ինչպես նա, Բարելոնյան աշտորակաշինության ժամանակակիցն ու մասնակիցը, Բարելոնում իր Արամանյակ որդուն ունենալուց հետո, ապստամբելով բռնակալ Բելի դեմ, թողնում է Բարելոնը և իր հոհմի հետ միասին շվում դեպի հյուսիսում ընկած Արարադի երկիրը: Այստեղ նա դադար է առնում, հուզանդիցիում Սևմի այստեղ նախապես բնակված հետնորդներին, տուն շինում և նվիրում իր թոռ Կադմոսին: Այնուհետև նա իր աղխով անցնում է հյուսիս-արևմուտք և բնակվում մի լեռնադաշտում, որն անվանվում է Հաբք: Այստեղ ևս, Հարբից հարավ դառնալով Տարոնում, նա հաստատում է իր իշխանությունը Սեմի-Տարբանի հետնորդների վրա:

Այս ավանդություններից առաջինը գնահատելիս, դժվար չէ համոզվել, որ այն զրիթե ամբողջությամբ հյուսված է աստվածաշնչական թարրերից: Առաջին հերթին դա ինքը նույն է (Քսիստոթրես անվան առաջ) և նրա տապանի ցամաքին հանդիպելու վայրը, որը թեև Մովսես Խորենացին չի անվանում, բայց ինչպես հետագա շարադրանքից (թե Պատմահոր, և թե Սեբեոսի) պարզվում է՝ «Արարադի երկիրն» է<sup>24</sup>, Երկրորդը նույն որդի Սեմն է, որի անունը ավանդության մեջ ժողովրդական կամ կեղծ ստուգաբանություն միջոցներով կապվում է Տարոնի Սիմ լեռան անվան հետ: Եթե այս ավանդության մեջ կա մի արաաաստվածաշնչական-տեղական թեմա, տպա դա վերաբերում է Տարոն-Տարբան զույգին, որը նույնպես փոխառնություն մեջ է դրվում ժողովրդական կամ կեղծ ստուգաբանության միջոցներով:

Երկու ավանդությունների փոխադարձ կապն ակնհայտ է դառնում ոչ միայն Հայկի ավանդության մեջ Սեմ-Տարբանի հետնորդների հիշատակությունից, այլև Հայկի երթուղու երկրորդ հատվածի և Սեմի երթուղու նույնությունից<sup>25</sup>, Սեմը «Արարադի երկրից» դնում է դեպի հյուսիս-արևմուտք, հասնում Սիմ լեռանը (Տարոնում) և ապա վերադառնում այնտեղ, որտեղից կկիլ էր: Հայկը նույն «Արարադի երկրից» գնում է դարձյալ դեպի հյուսիս-արևմուտք, բնակվում Հարբում ու գրավում նաև հարակից Տարոնը:

<sup>24</sup> Ի դեպ նշենք, որ Մովսես Խորենացու հիշատակած «Արարադի երկիրը» կապ չունի ո՛չ Մարատ լեռան, ո՛չ էլ Արարատյան դաշտի հետ, որոնք նա, համապատասխանաբար, անվանում է Մասիս և Այրարատ կամ Արալի դաշտ: «Արարադի երկիրը» կապվում է Կորդվաց աշխարհի Արարադ լեռան հետ: Այդպես է նաև Փավստոս Բուզանդի մոտ՝ Սարարադ՝ փոխանակ Արարադի, «Սարարադալ ի սահմանս Արարատյան տէրութեան ի գաւառն Կորդուաց», որին է հանդիպել նույն փրկական տապանը (Գ, 10): Թովմա Արծրունին ևս գրում է, որ նույն քաղաքան հանգեաց լ լերինս Կորդուաց (Թովմայի վարդապետի Արծրունու Պատմութիւն տանն Արծրունեաց. Թիֆլիս, 1917, էջ 45):

<sup>25</sup> Տե՛ս Մ. Արևիկյան. նշվ. աշխ., էջ 185, և հտ.:



Աստվածաշնչական տարրերով հագեցած է, անշուշտ, նաև Հայկի ու Հայկյանների տեղաշարժերի մասին ավանդութիւնը, բայց ոչ այն չափով, ինչպես նախորդը: Առաջին և շատ ցցուն տարրը Բաբելոնյան աշտարակաշինութիւնն է, որի կապակցութեամբ էլ Հայկը ավանդութեան մեջ բնակեցված է Բաբելոնում, որպեսզի այնուհետև, լեզուների խառնումից հետո, չվի Բաբելոնից, ինչպես մյուս ժողովուրդների ներկայացուցիչները<sup>26</sup>: Երկրորդն էլ, թերևս, դեպի հյուսիս բռնած նրա երթուղին է՝ «Արարադի երկրի» վրայով, ուր, ինչպես հիշում ենք նախորդ առասպելից, ցամաքին էր հանդիպել Նոյի տապանը<sup>27</sup>: Սրանով էլ, սակայն սպառնում են այս ավանդութեան աստվածաշնչական տարրերը:

Առանձին հարց է Հայկի՝ Մովսես Խորենացու մոտ մատուցված ծնընդաբանութիւնը (Հաբեթ—Գամբր—Թիրաս—Թորգոմ—Հայկ), որը անմիջակա նորին չի առնչվում քննարկող ավանդութեանը և նույնիսկ որոշակիորեն հակասում է նրան: Խնդիրն այն է, որ Հայկի հայր համարվող Թորգոմի բնակվելու վայրը ըստ Աստվածաշնչի տվյալների (Եղեկ. Ի՛, 14 և Լ՛, 6) եղած պիտի լինի իր իսկ անունը կրող «Տուն Թորգոմայ» (Բեթ Թոգարմա) երկիրը, որը գտնվել է Քի ծագացն հիւսիսոյ, և ոչ թե հարավում, ինչպես Բաբելոնը: Մասնագետները նույնացնում են այդ երկիրը Եփրատի փոքրասիական հոսանքի հովտում, Մալաթիայից հյուսիս ընկած՝ խեթական աղբյուրների Թեղարամայի, ասուրական աղբյուրների Թիզարիմմուի հետ: Հայկի հայրենիքն էլ, ուրեմն, ըստ այնմ, եղած պիտի լինի «Տուն Թորգոմայ» երկիրը: Բայց սա, ինչպես ասվեց, առանձին հարց է, որին կանգնադառնանք ստորև:

Այսպես, ուրեմն, Հայկի և Հայկյանների տեղաշարժերի հետ կապված ավանդութեան մեջ աստվածաշնչական ծագում ունեն միայն Բաբելոնի և նրանից ածանցվող տարրերը, իսկ դրանցից զատ այնտեղ մնում են Հարքում բնակվելու, Բելի հետ բախման և Հայկյանների՝ Հայկական լեռնաշխարհի արևելյան մասը իրացնելու հարուստ թեմաները, որոնք կապ չունեն Աստվածաշնչի հետ:

Այսպիսով, եթե մենք ընդունենք ավանդութեան նախնական տարրերակի գոյութիւնը հնարավորութիւնը, ապա նրանում, որպես Աստվածաշնչից եկող տարրեր, պիտի բացակային թե՛ Բաբելոնը և թե՛ «Արարադի երկիրը»՝ որպես միջանկյալ հանգրվան Հարքի ճանապարհին (այլ կապակցութեամբ, ինչպես ասացինք և կտեսնենք, այն կարող էր հիշատակված լինել), հետևաբար և ընդհանրապես Բաբելոնից մինչև Հարք ճանապարհի հիշատակումը: (Ավանդութեան վերը ճերկայացված մասը, իր նախաաստվա-

<sup>26</sup> Հմմտ. Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» Ա գրքին հտեքորդը հավելվածի երկրորդ մասը:

<sup>27</sup> «Արարադի երկրի» առկայութիւնը առասպելում, մեր կարծիքով, երկվական բնույթ ունի. այն չի կարելի լիովին աստվածաշնչական տարր համարել: Քսիսութեան (Նոյ)—Սեմի առասպելը շարձադրելիս, Մովսես Խորենացին հանվանն չի հիշատակում «Արարադի երկիրը», այլ ասում է. «Եւ նաւելոյն Քսիսութեան ի Հայս և դիպելոյ ցամաքի...»: Հայկի առասպելում, սակայն, Պատմահայրը նույն այս տեղանքը (որ դա իսկապես նույնն է, ցույց է տվել Մ. Արեղյանը, տե՛ս վերը) անվանում է «Երկիր Արարտգայ»: Ուրեմն, առասպելի այս կետում «Արարադի երկիրը» հանդես է դալիս որպես աստվածաշնչական տարր, զանի որ այն այստեղ Քսիսութեան—Նոյի միջոցով կապված է տալիս թե՛ «ցամաքին հանդիպելու» հետ: Սակայն, մյուս կողմից, այդ անդանունը, լինելով Ուրարտու տեղանվան տարբերակներից մեկը, հայկական իրականութեան համար անշուշտ շատ ավելի հին է, քան Աստվածաշնչի ազդեցութեան ժամանակը, ուստի և այն այլ դեպքերում կարող էր հանդես գալ նաև Նոյի տապանի խնդրից և, ընդհանրապես, Աստվածաշնչից, անկախ: Այսպիսի դեպք է առասպելում մեր կարծիքով, Հայկի կողմից «Արարադի երկրի» նվիրաբերումը իր թոռ Կադմոսին, որ արդեն Աստվածաշնչի ազդեցութեան հետ չի կապվում և, մեր համոզմամբ, առկա է եղեք նաև առասպելի նախնական տարրերակում (տե՛ս ստորև, էջ 38, 42):

ծաշնչակտան տեսքով, հավանաբար, պարունակած կլինի Հայկի և նրա տոհմի տեղաշարժերի նաև ուրիշ մանրամասներ, որոնք հետագայում կարող էին դուրս մղվել վերոհիշյալ աստվածաշնչակտան թեմաների ներմուծման հետևանքով, մասնավանդ, և թե հալասում էին դրանց)։

Այս տևողակետը հիմնավորելու համար կարելի է հենվել նաև տասպակի պահպանված տեքստի որոշ առանձնահատկությունների վրա։ Դրանք առկա են և Մովսես Խորենացու մատուցած տարբերակում, բայց ավելի ցցուն են ներկայացված Հայկի առասպելի՝ Սեբեոսի «Պատմության» կազմում մեզ հասած տարբերակի մեջ, ուստի քաղվածքներ ենք բերում միայն այդ վերջինից։ Հայկն այստեղ տարօրինակորեն հրկու անգամ է իր թոռ Կաղմոսին պարզելում «Արարադի երկրի» իր կալվածքը։ Առաջին անգամ այդ տեղի է ունենում Բարկոտից Հայաստան ճանապարհին, որի մասին կարողում ենք ըստ ղնա (զերկիրն Արարտոյ—Գ. Ս.) Հայկն կալուած ժառանգութեան Կաղմեայ թոռին իւրում, որդւոյն Արամենակայ» (Երևան, 1979, էջ 48), Երկրորդ անգամ նա այդ անում է իր կյանքի վերջում, որի մասին գրված է. «Եւ ի ժամանակի մահուանն իւրոյ ետ ղնա (նույն երկիրը—Գ. Ս.) կալուած ժառանգութեան Կաղմեայ թոռին իւրում, որդւոյ Արամենակայ» (էջ 50)։

Քանի որ ձևակերպումը բառացիորեն է կրկնվում՝ «ետ ղնա...» և այլն, ապա բնական է ենթադրել, որ հրկու դեպքերից մեկը մյուսի սոսկ կրկնությունն է և որ նախնական ավանդության մեջ այս երկուսից միայն մեկն է նշվել։ Մեր կարծիքով, եղել է միայն երկրորդը, քանի որ այն, ի տարբերություն առաջինի, կապված չէ աստվածաշնչական թեմայի հետ։

Ահա, ուրեմն, Մովսես Խորենացու «Պատմության» մեջ մեզ հասած երկու ավանդություններն էլ (այսինքն՝ Սեմ-Տարբանի և Հայկի), նրանց պարունակած աստվածաշնչական տարբերից դուրս, համառոտ են հանդես են բերում Տարոնը և Հարջը որպես Տարբանյանների և նրանց հնազանդեցրած Հայկյանների բնօրրան, որտեղից այնուհետև, ինչպես պատմվում է առասպելի շարունակության մեջ, տեղի է ունենում Հայկյանների հետագա տարածումը։

Այժմ սույն եզրակացության տեսանկյունով անդրադառնանք ուրարտական սեպագրական աղբյուրներին։ Դրանցից մեզ տվյալ դեպքում հատկապես հետաքրքրում է ուրարտական Մենուա թագավորի (մ. թ. ա. 810—786 թթ.) Մուշ քաղաքում հայտնաբերված արձանագրությունը, որ փոշազրված է քարակոթողի վրա (YKH, 41)։ Քարակոթողն էպես վնասված է, օակայն հնարավորություն կա ընկալիլու արձանագրության հիմնական բովանդակությունը։

Նախապես հիշեցնենք, որ Մենուայի օրոք սկսվում է Ուրարտուի աշխարհակալության շրջանը, երբ Ուրարտական տերությունը ետ մղեց ու նսեմացրեց իր գլխավոր թշնամի Ասորեստանին և իր արևմտյան սահմանները հասցրեց մինչև Եփրատի վերին հոսանքի հովիտը։ Նրա այդ վերելքը տևեց ավելի քան կես դար, որի ընթացքում Մենուային փոխարինեցին նրա որդին՝ Արգիշթի I-ը (մ. թ. ա. 786—764) և թոռը՝ Սարգուրի II-ը (մ. թ. ա. 764—730 թթ.)։

Սակայն մեծ տերություն ստեղծելու համար Մենուան նախ և առաջ պիտի դուրս գար բուն Ուրարտուի կամ Բիայնիլիի նեղ սահմաններից, որոնք նրա հոր՝ Իշպուհինիի օրոք ընդգրկում էին սոսկ Վանա լճի անապատը և նրան արևելքից, հարավից և հյուսիսից անմիջականորեն հարող հողերը։ Ահա, Մենուայի առաջին ռազմական ձեռնարկումներից էր այն արշավանքը, որ նկարագրված է Մուշի արձանագրության մեջ։ Վանա լճից հարավ ընկած մի ուղիով Մենուան իր զորքերով մտնում է ասուրական արձանագրություններում Շուբրիա անվանվող երկիրը, որը կաղմում էր Սասունի մի մասը, գրավում այդ երկրի Կուլմերի (ներկայումս՝ Քղիմար) քաղաքը, այնտեղից Աթաունե քաղաքի վրայով անցնում է Ուրմե երկիրը։



Այստեղ արձանագրությունը հաղորդում է. [h]a-a u-bi <sup>KUR</sup>Ur-me-i-e te-ru-b[il] i-ni DUB-te, այսինքն՝ «Ես նվաճեցի Ուրմե երկիրը, դրեցի այս քարակոթողը» (YKH, 41): Քանի որ այդ քարակոթողը Մուշ քաղաքում է գտնվում, ուրեմն և Մուշի շրջանը, այսինքն՝ Տարոնը, կազմել է հենց Ուրմե երկիրը: Անմիջապես դրանից հետո արձանագրությունը հաղորդում է՝

[KUR] Ar-hi-i-c-ai [...], որ նշանակում է «Արխի երկրին [...]» կամ «դեպի Արխի երկիրը [...]», իսկ դրանից հետո ջարդվածք է:

Առկա մասնագիտական գրականության մեջ Արխի երկրի տեղագրությունը բավականաչափ հստակ չէ ներկայացված: Նշվում է սոսկ, որ այդ երկիրն ընկած էր Վանա լճից հարավ-արևելք՝ Ուրմե երկրի և Կուլմբեի քաղաքի հարևանությամբ (Ն. Հարությունյան): Մինչդեռ Մուշի արձանագրությունը հնարավորություն է տալիս գտնելու Արխի երկրի ճշգրիտ տեղագրությունը: Եթե շարունակենք Մենուայի երթուղին Քղիմար—Մուշ (Կուլմբեի-Ուրմե) գծով, նույն ուղղությամբ, այսինքն՝ այնպես, ինչպես թելագրում է Մուշի արձանագրությունը, ապա այդ գիծը կհասցնի մեզ հայկական Հարթ դավառը, որն անմիջականորեն սահմանակից է Տարոնին հյուսիսից և հյուսիս-արևելքից: Հարթ դավառը հիշատակում է, բացի Մովսես Խորենացուց, նաև Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցը»՝ որպես Տուրուբերան նահանգի գավառներից մեկը: Այսպիսով, եթե պարզվում է, որ Արխի երկրի և Հարթ դավառի տարածքները համընկնում են, ապա ոչ մի խոչընդոտ չկա նույնացնելու նաև նրանց անվանումները: Արխին նույն Հարթն է: Սա կարելի է հիմնավորել նաև ուրարտա-հայկական լեզվական ընդհանրություններում հանդես եկող հնչյունական անցումների օրինաչափություններով (հ-ի բացակայությունը բառասկզբում, խ—ք անցումը): Արխի-Հարթ նույնացման փաստը ամրապնդվում է նաև Պլինիոս Ավագի կողմից Արածանու վրա Archene հայկական գավառի հիշատակությամբ (NH, VI, 31, 1—3)<sup>28</sup>:

Մեր թեմայի համար հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ Տարոն-Հարթի շրջանը, որը Մովսես Խորենացու պահպանած հայկական հնագույն ավանդության մեջ, ինչպես տեսանք, հանդես է գալիս որպես հայերի օրրան, իր աշխարհագրական տեղագրությամբ համընկնում է Ուրմե-Արխի շրջանի հետ: Խնդիրն այն է, որ վերջինս, ըստ ասուրա-ուրարտական սեպագրական աղբյուրների, իր հերթին, ոչ պակաս կարևոր հատկանիշներ ունի հայ ժողովրդի կազմավորման ու լեռնաշխարհում տարածման տեսակետից: Որո՞նք են այդ հատկանիշները:

Մասնագետները (Գր. Խալաթյանց, Գր. Ղափանցյան, Ս. Երեմյան, Բ. Պիրոտովսկի, Ի. Դյակոնով, Գ. Մելիքիշվիլի և ուրիշներ), վաղուց ի վեր առանձնացնում են Եփրատի փոքրասիական կամ վերին հոսանքի հովիտը, որպես հայ ժողովրդի կազմավորման բնօրրան՝ մ. թ. ա. II հազ. երկրորդ կեսում: Խեթական և ասուրական սեպագրական աղբյուրների տվյալների համաձայն այստեղ կուտակված են եղել մի շարք երկրներ, որոնց անվանումները այս օրվա մինչև այն օրվա անընդմեջ են հայերի ցեղանուններին: Հյուսիսից հարավ դրանք են բոլորին հայտնի Հայասա երկիրը, Սուխմու երկիրը, որի անվանումը համադրում են վրացիների կողմից կիրառվող «սոմեխի»՝ «հայ» ցեղանվան հետ, Թեքարամա՝ Աստվածաշնչում «Թորգոմի տուն» կոչվող երկիրը (Թորգոմը, ըստ ազգային ավանդության, հայերի նախնին է), Մալդիա-Մելիդ (այսօրվա Մալաթիա) երկիրը, որը երբեմն անվանվում է Խաթե, իսկ «խաթե»-ն ոմանք համարում են «հայ» ցեղանվան սկզբնական ձևը և այլն: Մրանք, բացի Հայասայից, գիտության մեջ երբեմն կոչվում են «ուշ-խեթական» թագավորություններ, բայց իրականում նրանք էթնիկապես հագեցած էին հայկական տարրով:

<sup>28</sup> Տե՛ս Գ. Խ. Մարգարյան. Ուրարտական տեղությունը և հայերը.— Ուրարտու և Հայաստան, Երևան, 1989, էջ 92 և հտ.:

Մ. թ. ա. XII դարից սկսած նույն տարածքի հարավային մասերում աղբյուրներում հիշատակվում են մուշկու և ուրումու ցեղերը, որոնք ևս համարվում են հայկական, ըստ որում «ուրումու»-ի հետ կապվում է հայերի «արմեն» ցեղանունը: Ասուրական աղբյուրները հիշատակում են սրբտնց ուռաջիաղայումը և Կալի արևելք, ըստ որում մուշկու ցեղերը հանդերձվանում են Ալի-Ադաիթում<sup>29</sup>, իսկ ուրումուները հասնում են Վանա լճի մոտերքը, որտեղ և հիշյալ աղբյուրներում նշված է Ուրումու կամ Ներքին Ուրումու երկիրը: Կարճ ասած, խեթական և ասուրական սեպագրական աղբյուրները մ. թ. ա. II հազ. վերջերին և I հազ. սկզբներին Հայկական լեռնաշխարհի արևմուտքում տարբեր անվանումներով նշում են հայկական մի մեծ, դեպի լեռնաշխարհի կենտրոնը ձգվող էթնակազմական դանդաղ: Սրանով, իհարկե, չի մխալում հայկական տարրի կղզյականների առկայությունն այդ ժամանակ նաև լեռնաշխարհի արևելյան մասում:

Մ. թ. ա. IX դարի վերջերից հանդես են դալիս ուրարտական սեպագրական աղբյուրները, որոնք էպպես լրացնում ու ճշգրտում են այս պատկերը և հանդես բերում Ուրմե (Ուրումու, Տարոն) երկրի հատուկ դերը:

Եթե, շմանկով մանրամասնությունների մեջ, հանրադրումարի բերենք ուրարտական երեք թագավորների՝ Մենուայի, Արգիշթի I-ի և Սարգուրի II-ի՝ իրենց տիրության հզորության գագաթնակետին, այսինքն՝ մ. թ. ա. VIII դարի առաջին կեսին, Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում իրականացրած ռազմական ձեռնարկումները, ապա կոծաղովի նրանց աշխարհագրական ծավալման երկու եղբ, երկու սահմանագիծ: Դրանցից մեկը՝ հեռավոր կամ արտաքին սահմանը, անցնում էր Եփրատի վերին հոսանքի հովտի երկայնքով: Դա Ուրարտուի պետական սահմանն էր արևմուտքում և ընդգրկում էր վերը թվարկված, այսպես կոչված «ուշ-խեթական», բայց իրականում, ինչպես ասվեց, էպպես հայալեզու մանր թագավորությունների մի մասը: Մյուսը՝ մոտակա կամ ներքին սահմանը, դեպի լեռնաշխարհի կենտրոնը ձգվող հայկական տարրի հիմնական զանգվածի եզրագիծն էր, որի վրա էին առաջին հերթին տեղի ունենում նրա բախումները՝ հակառակ ուղղությամբ, այսինքն՝ դեպի արևմուտք շարժվող ուրարտական ռազմական մեքենայի հետ: Ուրարտական աղբյուրներում, նշված կեսադարյա ժամանակահատվածի համար նմանօրինակ բախումներ են արձանագրված, եթև թվարկենք հարավից դեպի հյուսիս, հետևյալ երկրներում: Ալի (Ադաիթ), Արմե (Նիբրկերտ), Կուլմերի (Սասուն), Ուրմե (Տարոն), Արխի (Շարք), Տուարածինեի խուբի (Տուարածատափ), Ալուշ (Բյուրակն)<sup>30</sup>: Ահա այս երկրները միացնող շփով էլ ձգվում էր նշված մոտակա կամ ներքին սահմանը, շարունակվելով այնուհետև դեպի Եփրատի ակունքները և Սև ծովը: Այս ներքին սահմանագծի վրա, թվարկված երկրներից, որպես առավել անհանդիստ ու անկտրելի, ուրարտական աղբյուրներում հանդես է գալիս նրանցից ամենարևելյանը՝ Ուրմե երկիրը, որը Ուրարտական տերության սիրտը կաղմող վանա լճի ավազանի անմիջական հարևանն էր, ուստի և ամենավտանգավորն էր վանի թագավորների համար:

Այս է պատճառը, որ նրանք անընդհատ գրոհներ էին ձեռնարկում հատկապես այդ երկրի վրա: Մենուա արքան, բացի իր վերոհիշյալ Մուշի արձանագրությունից, հիշատակում է Ուրմեի նվաճման, ավերման, բնակչությանը կոտորելու մասին նաև ռի այլ, Թրմերում գտնված արձանագրության մեջ (ՄԿԻ, 40): Մ. թ. ա. 773 թ. Ուրմեի վրա է արշավում Արգիշթի I-ը և դարձյալ հազորում երկրի սվերման ու բնակիչների գերեզմար-

<sup>29</sup> Ըստ վրացի պատմաբանների՝ մուշկերը վրացական մեխերն են: Սակայն վրացական էթնիկական տարրի ներթափանցումը՝ Հայկական լեռնաշխարհի հարավային գոտին աղբյուրների տվյալներով չի հաստատվում:

<sup>30</sup> Տե՛ս ՄԿԻ, 28, 375 (Ալի), 156 D I + D II (Արմե), 40, 41 (Կուլմերի), 40, 41, 127 VI, 128 A 4, 155 A (Ուրմե), 41 (Արխի), 127 V. (Տուարածինեի խուբի), 157 (Ալուշ):



ման մասին դեպի Բիալինիլի: Քսան տարի անց, Ուրմեի վրա է հարձակվում Սարգուրի II-ը, որը հաղորդում է երկրի 11 ամրոցների ավերման և շուրջ 10 հազար մարդկանց տեղահանման մասին: Ուրմե, ինչպես տեսնում ենք, շնայած հուժկու գրոհներին, մնում էր անընկճելի:

Այսպիսով, թեև ուրարտական տերության հզոր թագավորները ամրացել էին Եփրատի հովտով անցնող արևմտյան սահմանի վրա, բայց և այնպես նրանց տերության կենտրոն Բիալինիլի և այդ սահմանի միջև գոյություն ունեւր մի րբատվար, ի դեմս հիշատակված երկրների շղթայի, որը ժամանակ առ ժամանակ դառնում էր ուրարտական արջանների համար խիստ շոշափելի ու վտանգավոր: Եվ այդ պատվարի ամենահզոր ու անհաղթ հարձակի հատվածը կազմում էր Ուրմե երկիրը: (Այստեղ պետք է փակագծում շեշտել, որ ուրարտական աղբյուրները տերության մնացած տարածչում հարևանում, հյուսիսում կամ արևելքում, չեն նշում էրկրի ներքին շերջանների համար, բացի մի դեպքից<sup>31</sup>, ոչ մի նմանօրինակ բախում: Սակարևոր հանգամանք է և ցույց է տալիս, որ տերության մեջ առկա էթնիկական տարրերից արևմտյանը, այսինքն՝ հայկականը, ամենաեռանդունը և ամենազործունն էր):

Այսպիսով, այս երկու սահմանների միջև զծագրվում է, եթե կարելի է այսպես ասել, մի «նախնական Հայաստան»<sup>32</sup>, եթե ուրարտական տերության հզորության պահին նրա արքաներին այսպես թե այնպես հաջողվում էր ժամանակավորապես արդելակել այդ «նախնական Հայաստանի» ընդարձակումը, ապա սկսած մ. թ. ա. VIII դարի կեսերից այդ արդելքը, ուրարտական արքաների հզորության հետ միասին, գրեթե վերանում է և հայկական տարրը սկսում է ողողել լեռնաշխարհի նաև արևելյան կեսը, որպիսի պրոցեսին պիտի օժանդակեր այնտեղ հայալեզու բնակչության հատվածների առկայությունը:

Այս մասին արդեն ուրարտական պաշտոնական աղբյուրները, սկսած մ. թ. ա. VIII դարի կեսերից, քար լեռնություն են պահպանում, քանի որ սովորություն չկար հաղորդումներ անելու պարտությունների կամ անհաջողությունների վերաբերյալ: Ժամանակի ասուրական սեպագրական աղբյուրներն են, Ասորեստանի թագավորների, մասնավորապես Սարգոն II-ի (մ. թ. ա. 722—705), ուղարկած հետախույզների զեկույցները, որ խոսում են թշնամու երկրում՝ Ուրարտուում տեղի ունեցող այլևայլ խռովությունների, բախումների ու տեղաշարժերի մասին՝ հատկապես տերության հարավային. Ասորեստանին սահմանամերձ գոտում<sup>33</sup>:

Մեր ուշագրության առարկա պատմական պրոցեսն իր արտացոլումն է գտել, սակայն, Մովսես Խորենացու, «Պատմության» մեջ, որի հաղորդած տեղեկություններին էլ վերագրվում ենք:

Եթե ըստ ուրարտական սեպագրական աղբյուրների Ուրմե-Արխիի շերջանը ներկայանում է որպես Հայկական լեռնաշխարհի արևմուտքում տարածված հայկական էթնակազմական զանգվածի արևելյան եզրը, ապա նրան համապատասխանող Տարոն-Հարքի շրջանը հայ ազգային հնագույն ավանդության մեջ ներկայանում է, ընդհակառակն, որպես հայերի դեպի արևելք տարածման մեկնակետ: Այսինքն, այնտեղ և այն ժամանակ (մ. թ. ա. VIII դարի կեսերին), որտեղ և երբ դադարում են պատմել սեպագրական աղբյուրները, այդ նույն տեղից պատմությունը շարունակում է հայկական

<sup>31</sup> УКН. 418.

<sup>32</sup> Այդ է վկայում, փաստորեն, նաև ուրարտական աղբյուրների այն տեղանունների ցանկը, որոնցում Գ. Բ. Զահուկյանը ավելի կամ պակաս հավանականությամբ հայերենի բառարմատներ է տեսնում: Դրանց ճնշող մեծամասնությունը վերաբերում է մեր նշած տարածքին: Տե՛ս Գ. Բ. Զահուկյան. Ուրարտերենը և հայերենը.—Ուրարտու և Հայաստան, Երեւան, 1988, էջ 151 և հտ.:

<sup>33</sup> АВИУ, 50, 1, 3, 4, 5, 8, 9, 10 և այլն:

հնադրոյն ավանդութիւնն: Ըստ որում վերին աստիճանի հատկանշական է, որ այն խոստում է միայն ու միայն արեւելյան ուղղութեամբ կայացած տեղաշարժերի մասին, բայց ամենեւին ոչ՝ արեւմտյան:

Հայկը, պատմում է Մովսէս Խորենացին, Հարբում «մեռանի, յանձն առնելով զբովանդակ ազնի Արամտնեկայ որդոց իւրում», իսկ «Արամտնեկայ առիտը զամենայն բազմութիւնն՝ խաղալ յարեւելս հյուսիսոյ» (Ա, 12): Արամանյալի և նրա ունմիջական հետնորդների տարածվելը հյուսիսարեւելքում, այսինքն՝ ներկայիս Հայաստանի հանրապետութեան տարածքում և նրանից էլ այն կողմը՝ Կասպից ծովի ուղղութեամբ դեպի Արաքսի և Կուրի խառնարանը, շատ մանրամասն նկարագրված է ավանդութեան մեջ: Այդ նկարագրութիւնն ամրապնդված է նաև թրացվող վայրերի տեղանունները Հայկյանների անձնանուններից բխցնելու (ինչպես նախորդ շարադրանքում Սիմը՝ Սևմից, Տարոնը՝ Տարրտնից) բազմութիւլ փորձերով: օրինակ, Արազածը՝ Արամանյակից, Յրմալիքը՝ Արամայիսից, Շիրակը՝ Շարայից, Մասիսը՝ Ամասիայից, Ալարատը՝ Արալից, Գեղարքունիքը՝ Գեղամից, Սիսակունը (Սյունիքը)՝ Սիսակից, Ասանը՝ Առանից, Աղվանքը՝ Ազու մականունից և այլն, և այլն: Այս ժողովրդական կամ կեղծ կոչվող ստուգարանութիւնները, իհարկե, դիտական արժեք չունեն, սակայն իրենք՝ տեղանունները արտակարգ կարևոր են, քանի որ որոշակի աշխարհագրական տեսք են տալիս Հայկյանների իրթուղիների մասին ավանդութեան մեջ պահպանված տեղեկութիւններին:

Հայկյանների բռնած մյուս ուղղութիւնը, դարձյալ իսկնտ ունենալով Տարոն-Հարթի շրջանը, հարավ-արեւելյանն է՝ դեպի «Արարադի երկիրը», այսինքն՝ Կորդուք: Այստեղ անհրաժեշտ է մտաբերել վերը արտահայտված մեր այն կարծիքը, որ «Արարադի երկրի» հիշատակումը որպէս Բաբելոնից սկիզբ առած ճանապարհի վրա հանգրվանի՝ աստվածաշնչական մակաշերտում է առասպելի նախնական տարբերակի վրա և, որպէս այդպիսին, պիտի դուրս բերվի ավանդութեան բուն բովանդակութիւնից: Ընդհակառակն, այդ երկրի հիշատակումը միանգամայն տեղին է ավանդութեան այն տեղում, ուր Սեբեոսյան տարբերակում ասված է, թե Հայկը իր մահվանից առաջ նվիրեց «Արարադի երկիրը» իր թոռ Կադմուսին՝ Արամանյակի որդուն, իսկ Մովսէս Խորենացու մոտ՝ առավել հարմարեղծած աստվածաշնչական թեմաներին, ինչպէս և իր սեփական՝ տեղեկութիւնների փոխհարմարեցման սովորութեանը, թե Հայկը կյանքի վերջում իր Կադմոս թոռանը հրամայում է իր առաջին (այսինքն՝ Կորդուքի, սկզբում՝ Կրկն նվիրութեամբ) տանը բնակվել<sup>34</sup>: Ի դեպ, նշենք, որ Կադմոս անվան իրական կապը այս երկրամասի հետ ամրապնդվում է այն հանգամանքով, որ Կորդուքի անմիջական հարեւանութեամբ՝ Տիգրիսի մյուս (մասամբ և այս) ափին, տարածվում էր ասուրական աղբյուրների Կադմուս-ի երկիրը:

Վերջապէս Հարթից դեպի արեւելք՝ դեպի Վանա լճի շրջակայքը և հասկապէս Վան-Տոսպի շրջանը, շարժումն իրականացնում են, ըստ ավանդութեան, ինքը Հայկը, նրա որդիներ Խոռն ու Մանավազը և թոռ Բազը: Լսելով Բելի հարավից ներխուժման մասին, Հայկը շտապում է նրան ընդառաջ, շրջանցելով Վանա լիճը, և բախվում նրա հրոսակների հետ Ուրարտու-Քիսինիլի բուն սրտում: Տեղի ունեցած ճակատամարտի վայրը ստանում է Հայոց ձոր անվանումը, որպիսի անունով հայտնի է Վանա և Ուրմիա լճերի միջև գտնվող հայկական գավառներից մեկը: Խոռը և Բազը իրացնում են Վանա լճի հյուսիսային ափերը (Խոռխոռունիք և Բզնունիք): Սրանով, ըստ Մովսէս Խորենացու, փաստորեն, ավարտվում է Հայկական լեռնաշխարհի արեւելյան մասի իրացումը Հայկյանների կողմից:

6. Հարդ է ծագում, սակայն, իսկ ե՞րբ և ինչպե՞ս է իրացվել, ըստ ազգային ավանդութեան, Հայկական լեռնաշխարհի արեւմտյան մասը, այսին-

<sup>34</sup> Տե՛ս վերը, էջ 37, 38, ծան. 27:



քըն՝ Հարթ-Տարոնի շրջանից դեպի արևմուտք, մինչև Եփրատի հովիտը տարածվող հսկայական երկրամասը, պատմական Հայաստանի մոտավորապես կեսը: Զարմանքով տեսնում ենք, որ ոչ միայն այդ մասին, այլև ընդհանրապես այդ երկրամասի վերաբերյալ ազգային ավանդույթները ոչ մի տեղեկություն չի պարունակում: Հանգամանք, որը բացատրություն կամ մեկնաբանություն է պահանջում, քանի որ աներևակայելի է, որ ավանդույթները իր նախնական տեսքով ևս այդ խնդրում լուրջուն պահպաներ:

Մակայն նախ և առաջ համոզվենք, որ դա իրոք այդպես է: Մենք քըն-Բարեկեցիք Մովսես Խորենացու Պատմության Առաջին գրքի 10—12-րդ գլուխների պարունակած տեղեկությունները, որոնցում խոսքը Հայկի և Հայկյանների Բաբելոնից մինչև Հարթ-Տարոնի շրջանը և այնտեղից դեպի արևելք տեղաշարժերի մասին էր, որոնց ընթացքում Հայկյանների կենտրոնը Հարթ-Տարոնից տեղափոխվում է Արարատյան դաշտը (ըստ Մովսես Խորենացու՝ Արարատ կամ Արայի դաշտ), որտեղ հիմնադրվում է առաջին մայրաքաղաք Արմավիրը:

Հարորդ՝ 13—14-րդ գլուխները նվիրված են Հայկյանների վնասորդ սերնդի ներկայացուցիչ Արամի (որի մասին այլ առումով վերը խոսվել է) ռազմական արշավանքներին, որոնց մեկնակետը արդեն Արմավիրն էր: Նկարագրված երեք արշավանքներից՝ դեպի արևելք, դեպի հարավ և դեպի արևմուտք, առաջին երկուսը պարզորոշ կերպով շարունակություն են կազմում Հայկի և Հայկյանների նախորդած տեղաշարժերի:

Այսպես, առաջին արշավանքը ուղղված է Մարաստանի (Մեդիայի) կողմը, որի եզրերին գրեթե հասել էին ինքը Հայկը՝ մտնելով Վանա և Ուրմիա լճերի միջև գտնվող Հայոց ձոր գավառը, և նրա հետնորդները՝ մտնելով Արաքսի ստորին հոսանքի հովիտը: Արամը, գրում է Մովսես Խորենացին՝ «պատահէ Մեզացուցն երիտասարդաց, որոց առաջնորդէր Նիւբարոմն ասացեալ Մադէս ... յեղերս սահմանացն Հայոց»: Հաղթելով սրան, Արամն իր հերթին առաջ է ընթացնում մինչև Մարաստանի Զարասպ լեռը:

Արամի երկրորդ արշավանքը ուղղված էր դեպի հարավ՝ Կորդուքի վրայով Ասորեստանի կողմը: Նա հաղթեց Բարշամին և զգմեծ մասն դաշտացն Ասորեստանի կալու ի ծառայութեան հարկի...»: Այստեղ նույնը կարելի է ասել, ինչ որ առաջին արշավանքի դեպքում. Արամի այս արշավանքը նույնպես անմիջական շարունակությունն էր Հայկի և Հայկյանների տեղաշարժերի, քանի որ խոսքը Կորդուքի մասին է, որը, ինչպես հիշում ենք, բնակեցրել էր Հայկի թոռ Կարմուսը:

Միանգամայն տարբեր է, սակայն, Արամի երրորդ, դեպի արևմուտք ուղղված արշավանքը: «Աստ յարևմուտս շարժեալ, գրում է Մովսես Խորենացին, ... հասանէ ի կողմանս Կապազովկացուց, ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա»: Այստեղ նա հաղթում է Պայպիս Քաազյա Տիտանյանին, կուսակալ է կարգում իր ազգական Մշակին (որը հիմնադրում է Մաժաք քաղաքը, հետագայի Կեսարիան) և «դառնալ ի Հայս», նախապես պատվիրելով տեղացի բնակչությանը սուլորել հայերենը: Նրա նվաճած տարածքից Մաժաքի (Կեսարիայի) շրջանը անվանվում է «Պոտի Արմենիա» (Մովսես Խորենացու մոտ՝ «Պոտին Արմենիան»)՝ հունարենի հայցական հոլովով), այսինքն՝ «Առաջին Հայք», մյուսն էրը՝ «մինչև ցրուն իւր սահմանսն»՝ Երրորդ, Երրորդ և Զորորդ Հայք: Մրանք, բացի վերջինից, որն ըստ Մովսես Խորենացու նույնական է Մոփքի հետ, գտնվում էին Եփրատից արևմուտք: Այս երկրամասերը, ըստ Մովսես Խորենացու, նախապես աֆրոնակ էին և Արամը լցնում է դրանք բնակչությամբ:

Այսպես, ուրեմն, Արամի օրոք, «բուն իւր սահմանքն», այսինքն՝ Հայքի արևմտյան սահմանները, անցնում էին Եփրատի վրայով, բացառյալ Մոփքի շրջանը: Բայց չէ՞ որ ըստ ավանդության Հայկի ու Հայկյանների բնակեցրած ամենաարևմտյան շրջանը Հարթ-Տարոնն էր: Ուրիշ խոսքով ասած, եթե Արամի այս արշավանքը ևս, նախորդ երկուսի նման, կազմեր

Հայկի և Հայկյանների տեղաշարժերի շարունակությունը, ապա այն պիտի սկսվեր ոչ թե Եփրատից, ինչպես որ է, այլ Հարթ-Տարոնի շրջանից:

Այսպիսով, մենք համոզվում ենք, որ ազդային ավանդությունը՝ մեզ հասած վիճակում, կատարյալ լուրջություն է պահանջում լեռնաշխարհի արևմտյան մասի և նրա իրացման մասին: Կուսում է նաև ինքը՝ Մովսես Խորենացին, շփոթվելով որևէ ձևով լրացնել այդ բացը, ըստ հրեությունից դրա համար ձեռքի տակ անհրաժեշտ նյութ շունճնալու պատճառով: Եթե մեկը բավականաչափ ծանոթ է Պատմահոր սկզբունքին՝ մշտապես ձգտել նկարագրվող երևույթներն ու պրոցեսները հասցնելու վերջավորված, ավարտուն վիճակի, ապա նրան այդ բացի առկայությունը իսկապես առեղծվածային կենդանացնում: Այսպես, օրինակ, եթե շհնոանա՞ք լեռնաշխարհի իրացման խնդրից, ապա պատմահայրը մոռացության չի տվել Հայկյանների կապակցությամբ շհիշատակված նրա հյուսիսային մասերը, լրացնելով այդ բացը Վաղարշակի դործունեությանն ունդրագանձելու ժամանակ: Այսպես, Վաղարշակը (Բ, 6), մակեդոնացիների լծից ազատագրելով անդրևփրատյան շրջանը («Ղեկավարն Մամաթայի և Ղոնտացիս և Ղմզերացիս»), «գտնեալ զհիսիսեաւ առ ստորոտովն Պարխուրայ ընդ մէջ Տայոց», «Եւ աստ կոչեցիալ Վաղարշի եկամտաւ ազդն, որ ի դաշտին հիւսիսոյ և որ զստորոտով մեծի լերինն Կալկասայ ... արձակէ զնոսս հանդերարամբ իմաստնովք և վերակացուք յիւրմէ: Եւ ինքն ... իջանէ ի տեղիս խոտաէլաս միւր ի սահմանն Շարայի», այսինքն՝ Հայկյանների նախօրոք իրացրած հրկրամասը՝ Շիրակ: Սա կրկնում է Արամի արևելյան և հարավային արշավանքների սխեման, այն տարբերությամբ միայն, որ Վաղարշակը ոչ թե շարունակում է Հայկյանների տեղաշարժը, ասենք, նրանց իրացրած Շիրակից, այլ շրջանց ճանապարհով է մոտենում նույն այդ Շիրակին:

Այս հետևախորքի վրա իսկապես դժվար է վերոհիշյալ բացը վերագրել Մովսես Խորենացուն, և բոլոր հիմքերը կան բացատրելու այն նրա ժառանգած ազգային ավանդության թերի վիճակով: Եթե միայն շհնոանացիներ, թե համապատասխան գլուխները ինչ-ինչ պատճառներով շեն հասել մեզ նրա «Հայոց պատմության» կազմում, մի բան, որ տվյալ դեպքում վերին աստիճանի անհավանական է թվում:

Վերը նշվել է, որ այնպիսի աստվածաշնչական տարրերի ներմուծումը հայ ազգային հնագույն ավանդության մեջ, ինչպիսիք են բաբելոնյան աշտարակաշինությունը և նրա հետևանքների հետ կապված թեմաները, ընդունակ էր դուրս մղելու բուն ավանդության որոշ թեմաներ, մանավանդ, եթե վերջիններս հակասելիս լինեին վերոհիշյալ տարրերին:

Ահա այս տեսանկյունով դիտարկելիս Մովսես Խորենացու մոտ պահանջված պատկերը, մենք որոշակի իրավունք ունենք ենթադրություն անելու, թե նշված բացը նախապես ավանդության մեջ չի եղել և առաջացել է Աստվածաշնչից ծագող՝ Հայկի և Հայկյանների բաբելոնյան ուղիով Հայկական լեռնաշխարհը մտնելու տարբերակի՝ նրա վրա մակաշերտման հետևանքով: Ուրիշ խոսքով ասած՝ բաբելոնյան տարբերակը ավանդությունից դուրս է մղել լեռնաշխարհի արևմտյան մասի հետ կապված այնպիսի մի թեմա, որը հակասում էր իրեն:

Ծագող հարցը կարելի է այսպես ձևակերպել. եթե Հայկը և Հայկյանները ըստ ավանդության նախնական վերականգնվող տարբերակի շեն հայտնվել Հարթ-Տարոնի շրջանում բաբելոնյան ուղիով, ապա ո՞ր ուղիով կարող էին նրանք հայտնված լինել այնտեղ ըստ այդ տարբերակի: Այստեղ մենք ընտրելու հնարավորություններ գրեթե չունենք, քանի որ պարզ է, որ, ըստ այդ տարբերակի, նրանք չէին կարող հայտնված լինել այնտեղ, ինչպես բխում է վերը շարադրվածից, ոչ Ասորեստանի կողմից, այսինքն՝ դարձյալ հարավից, ոչ էլ Մարաստանի կողմից, այսինքն՝ արևելքից: Նույնը և հյուսիսից, Ուրեմն, մնում է արևմտյան կողմը: Կարելի է գուցե մտածել,



թև վերականգնվելիք թեման կապված է եղել ոչ թե արևմուտքից գալու, այլ ընդհակառակն, Հարթ-Տարոնի շրջանից դեպի արևմուտք տարածվելու հետ: Շատ բնական կլինեք ենթադրել, թե երևա, թե ըստ նախնական ազնադուրթյան, բացի Արամանյակից, որը շարժվել է դեպի արևելք, Հայկի մեկ ուրիշ որդի, իր գերդաստանով հանդերձ, նույն ձևով շարժվել է դեպի արևմուտք և իրացրել, ասենք, Արածանու հովիտը, Ծփրատի ձախափնյակը և այլն, տալով տեղերին յուրայինների անունները: Սակայն այստեղ մի դժվարություն կա: Այսպիսի թեման մազաչափ անգամ չէր հակասի Ասավածաշնչից ծագող բարեկրոնյան տարբերակին, ուստի և ոչ մի հիմք չէր լինի այդ թեմայից ձերբազատվելու համար: Ընդհակառակն, այդպիսի համապարփակ ավանդության մեջ բաբելոնյան տարրի ներմուծումը ավելի շքեղ և արդյունավետ տեսք կտար նույն այդ տարրին:

Իմ կարծիքով, այս պարագաներում, մե՞նք, կարող ենք միայն մի ենթադրություն անել, այն է, որ հայոց հնագույն ազգային ավանդության նախնական տարբերակում Հայկը և Հայկյանները հասել են Հարթ-Տարոնի շրջանը արևմուտքից՝ Ծփրատի ավազանից: Այսպիսի ենթադրությունը լիովին զոհացնում է մեր նշած նախապայմանին՝ նրանով ուրվագծվող պատկերը տրամագծորեն հակասում է աստվածաշնչական բարեկրոնյան տարբերակին: Այսպիսով, այդ պատկերի չբացումը՝ նշված տարբերակի ազդեցության տակ դուրս մղվելու հետևանքով, լիովին բացատրում է մեզ հասած ավանդության մեջ լեռնաշխարհի արևմտյան մասի հետ կապված թեմատիկայի իսպառ բացակայությունը:

Այս ենթադրությունն ամրապնդելու համար կարևոր նպաստ է բերում դարձյալ Մովսես Խորենացու հիշատակությունը Հարթի կամ, ավելի ճիշտ, Հարթում բնակվածների մասին: Վկայակոչելով Մար Աբասին, Պատմահայրը գրում է. «Եւ ինքն (Հայկը) խաղայ, ասէ, այլով աղխին ընդ արևմուտս հիւսիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարթ, այս ինքն թէ հարթ են<sup>35</sup> աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ» (Ա, 10):

«Տուն Թորգոմայ»՝ աստվածաշնչական աբտահայտություն է՝ երբայրեանում՝ Beth Thorgoma, հունարենում՝ Οἶκος τοῦ Θουργαμά (կամ Θουργαμά), որ նշանակում է ոչ թե պարզապես «Թորգոմի տուն», այլ «Թորգոմի տուն» անունը կրող երկիրը<sup>36</sup> (ինչպես, օրինակ, հայ մատենագրության մեջ «Ան-

<sup>35</sup> Որոշ բացատրություններ է պահանջում այստեղ «հարթ»՝ «հայրեր» բառը: Առասպելի ըրն իմաստն այն է, որ Հարթում առաջինները բնակություն են հաստատում Հայկը և նրա որդիները: Ուրեմն և, ըստ առասպելի, «հարթ... ազգի տանն Թորգոմայ» հենց նրանք են: Սակայն եթե այս արտահայտությունը պոկենք առասպելի կոնտեքստից, այն կնշանակի ավելի շուտ ոչ թե Հայկին ու իր որդիներին, և նույնիսկ՝ ոչ թե իրեն Թորգոմին, այլ նրա հայրերին՝ Թիրասին, Գամբրին, նույնիսկ Հաբեթին: Մի բան, որ ինքն առասպելը կտրականապես մերժում է: Հետևաբար, հանդես է գալիս որոշակի հակասություն այդ արտահայտության նեղ իմաստի և առասպելի բովանդակության միջև: Այդ հակասությունը չէր լինի, եթե Մովսես Խորենացու մոտ կարգայինք փոխանակ «հարթ»-ի, ասենք թե, «արթ ազգի տանն Թորգոմայ», որը ոչ մի կասկած չէր թողնի, թե խոսքը Հայկի ու նրա որդիների մասին է: Ահա, մեր կարծիքով, այդ նշմարվող հակասությունը բացատրվում է այն հանգամանքով, որ «հարթ» բառն այստեղ ծագել է «Հարթ» տեղանվան ճնշման ներքո, որպես Պատմահայրը շատ սիրելի ժողովրդական ստուգաբանությունների գայթակղեցուցիչ մի նմուշ: Հմմտ. Ա. Մ. Գարագաշյան. Բնական պատմություն հայոց, Թիֆլիս, 1895, մասն Ա, էջ 146, ուր ես նշված է այդ հանգամանքը, ինչպես և հիշեցված է, որ «Հարթ» բառի հղովման ձևը «Հարթայ» է, և ոչ «Հարանց», ինչպես կլինի, եթե ստուգաբանությունը ճիշտ լիներ:

<sup>36</sup> Որ Մովսես Խորենացու մոտ ևս ճիշտ այդ իմաստն է առկա, բացի Աստվածաշնչի հեղինակությունից, ցույց է տալիս նաև իրեն՝ Պատմահայր բառօգտագործման հանգամանքը: Այսպես, մենք նրա պատմության մեջ այլևս չենք գտնում «ազգ տանն», այսինքն՝ «տան

դեղտուն» արտահայտությունը): Դրա մասին վերը խոսվել է, իսկ այժմ մեջբերենք Աստվածաշնչում առկա երկու համապատասխան հիշատակությունը, երկուսն էլ Եղեկիել մարգարեի այն ճառերից, որոնք թվագրվում են մ. թ. ա. 590—585 թթ.<sup>37</sup>: Առաջինը կապված է Փյունիկիի Տյուրոս վաճառաշահ քաղաքի հետ. «Եվ ի Տանէ Թորդոմայ<sup>38</sup> ձիովք և հեծելովք և ջորիովք լցին զվաճառս քո» (ԻՅ, 14): Երկրորդը հետևյալն է. «Եւ Տունն Թորդոմայ ի ծաղացն հիւտիոտյ, և ամենեքին, որ շուրջ զնովու» (ԼԸ, 6):

Վերն արգին տալեց, որ «Տուն Թորդոմայ» հրկիրը տեղադրվում է Եփրատի վերին հոսանքի ավազանում՝ Մալաթիայից հյուսիս: Ստիպան հայ միջնադարյան մատենագրության մեջ այն ընդհանրապես միանշանակ ընկալվել է որպես Հայաստան. այսպես, օրինակ, Հովհաննիս Դրասխանա-կիրացու մոտ (Թիֆլիս, 1912), էջ 6՝ «Վաղարշակ Պարթև թագաւորէ տանս Թորդոմայ» կամ էջ 47՝ «ի պատրիարքութիւն տանս Թորդոմայ զՄեծն ներսէս» և այլն:

Ստիպան V դարում, հրը դեռ նոր էր թարգմանվել Աստվածաշունչը, «Տուն Թորդոմայ»-ը դեռևս մտածվում էր իր աստվածաշնչական իմաստը: Այս է պատճառը, որ այդ դարի հեղինակները, ցանկանալով նույնացնել «Տուն Թորդոմայ»-ը Հայաստանի հետ, միշտ հատուկ բացատրություն են տալիս, թե խոսքն այստեղ Հայաստանին է վերաբերում: Բացի Մովսես Խորենացուց, այդ արտահայտությունը V դարում հանդիպում է Ազարթանըղոտի և Փավստոս Բուղանդի մոտ, հետևյալ տեսքով. «ՅԱյրարատիան զաւառին ... բխեցին Հայոց տանն Թորդոմայ շնորհք» (Առաքանգեղոս, 776), «ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորդոմայ» (796), «տան որդոց Թորդոմայ աշխարհին հայոց» (Փավստոս, Դ դրքի վերնագիր), «ամենայն բնակիչք տանն Թորդոմայ, հայ լեզուն առ հասարակ» (Ե, 30)<sup>39</sup>:

Մովսես Խորենացու մոտ, ինչպես տեսանք, նման բացատրություն չկա, ուստի կարելի է մտածել, որ նրա մոտ «Տուն Թորդոմայ» արտահայտությունն էլ ավելի է պահպանում իր աստվածաշնչական իմաստը, քան V դարի նշված հեղինակների մոտ է: Մեր ենթադրությամբ այստեղ աղագային հնադույն առասպել-ավանդության կորսված մասից մի նմուշ կամ վերհուշ է պահպանվել, որը հուշում է, թե այդ մասում խոսված պիտի լինեն Հայկի ու նրա որդիների ոչ թե Բաբելոնից, այլ Հայկի բուն հայրենիքից՝ «Տուն Թորդոմայ»-ից մինչև Հարթ կտրած ճանապարհի մասին: Հայկի առասպելի հնությունը ընդունողները համաձայն են, որ բաբելոնյան

ազգա արտահայտությունը, ինչպես որ այստեղ կա, թեև դրա առիթները արտակարգ բազմաթիվ են: «Աղգ» բառը նրա մոտ անմիջականորեն լծորդվում է անձնանվան, տոհմանվան կամ ցեղանվան հետ, օրինակ. «աղգին Քամայ» (Ա, 6), և ոչ «աղգին տանն Քամայ», «յազգէ Գրիգորի» (Գ, 16), «աղգ Մամիկոնեից» (Բ, 81), «յազգէն Գնունեաց» (Գ, 43), «աղգ Պարթևաց» (Բ, 68) և այլն, և այլն: Սա պարզորոշ կերպով նշանակում է, որ քննարկվող դեպքում «աղգ» բառի հետ լծորդման առարկա հանդես է գալիս ոչ թե «Թորդոմա» անունը (այդ դեպքում կլինեք պարզապես «աղգ Թորդոմայ»), այլ «Տուն Թորդոմայ» միասնական արտահայտությունը, որպես երկրի անուն, ինչպես որ այն ներկայանում է Աստվածաշնչում:

37 O. Eissfeldt. Einleitung in das Alte Testament. Tübingen, 1964, S. 504 ff.

38 Ի դեպ, հայերեն Աստվածաշնչում այդ անվան ուղղական հղովմանն է Թորդոմա, սեռականը՝ Թորդոմայ (այստեղից էլ՝ Տուն Թորդոմայ), իսկ հայ մատենագրության մեջ՝ համապատասխանաբար՝ Թորդոմ-Թորդոմայ: Տե՛ս Հր. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. հ. Բ, էջ 344:

39 Նաև այն դեպքերում, երբ խոսքը ոչ թե անմիջականորեն ստուն Թորդոմայ-ի, այլ «Թորդոմայ ազգի» կամ «Թորդոմայ որդոց» մասին է, նշված հեղինակները դարձյալ շատ զգույշ են: Հմտ. «զԹորդոմայ ազգիս, զՀայաստան աշխարհիս» (Ազաթանգեղոս, 16)՝ «ազգացն Հայաստան աշխարհի որդոց Թորդոմայ» (Փավստոս, Խոստ. նախ.) և այլն:



ուղին հետագայի հավելում է, ուրեմն և բացակայել է նրա նախնական տարբերակում: Մենք, մեր հերթին, ջանացինք ցույց տալ, որ այն, մակաշերտվելով առասպելի վրա, պետք է որ դուրս մզեր մեկ այլ գաղափար, որը նրան հակասում էր, ըստ որում, դուրս մղված գաղափարը, բնականաբար, պետք է գարձյալ Հայկի գալստյան ուղուն վերաբերեր: Ահա, «Տուն Թորգոմայ»-ի ուղու թեման է, որ, մեր կարծիքով, դուրս է մղվել բաբելոնյան ուղու հավելման հետևանքով, որպես նրան տրամագծորեն հակասող:

Կարելի է առարկել, թե այս թեման ևս աստվածաշնչական է, ուստի և երաշխիք չկա, թե այն առկա է եղել առասպելի նախնական տարբերակում: Այո, այն ևս արտաքենապես աստվածաշնչական է, բայց այդ երկու աստվածաշնչական թեմաների միջև տարբերություն կա: Բաբելոնյան թեման զուտ աստվածաշնչական է, կապված է աշտարակաշինության և նրան հաջորդած՝ ժողովուրդների ցրվելու առանցքային գաղափարի հետ, ուստի և կարող էր բխել միայն ու միայն Աստվածաշնչից, մինչդեռ մյուսն ունի իր արտաստվածաշնչական պրմատները:

Այսպես, Թորգոմի, որպես հայերի նախահոր, գաղափարը, համենայն դեպս, ավելի վաղ է վկայված, քան իրականացվել է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը: Այն առկա է արդեն IV դարի հեղինակ Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնում», որտեղ կարդում ենք. Θοργαυζ ἐξ οἰς Ἀρμενιοι— «Թորգոմա, որից (ծագում են) հայերը»: Հայ.՝ «Թորգոմ. և ի նման է Հայք»<sup>40</sup>, Այսինքն, Թորգոմի հայոց նախահայր լինելու գաղափարը V դարի հայ մատենագրության մեջ ծագած մի գաղափար չէ՝ հղացած սոսկ Աստվածաշնչի թարգմանության ներքո, այլ այն գոյություն է ունեցել արդեն ավելի վաղ, նախագրական շրջանում:

Այնուհետև, «Տուն Թորգոմայ» երկրի մասին տեղեկությունները չեն սահմանափակվում Աստվածաշնչի պարունակած՝ վերը մեջբերված երկու վկայություններով: Այն, ինչպես արդեն ասվել է, նույնանում է մ. թ. ա. VIII—VII դդ. պատկանող ասորական աղբյուրների Թիլգարիմմուհի<sup>41</sup> և մ. թ. ա. XVI—XIII դդ. պատկանող խեթական աղբյուրների Թեգարամայի<sup>42</sup> հետ՝ թե՛ իր անվամբ և թե՛ աշխարհագրական տեղադրությամբ: Այնպես որ մեր առասպելը կարող է ժամանակին սնված լինել հենց այդ իրականություններից, և միայն հետագայում որդեգրած այդ երկրների աստվածաշնչական «Տուն Թորգոմայ» անվանումը<sup>43</sup>:

Իսկ այն հանգամանքը, որ Թորգոմի տուն-Թիլգարիմմու-Թեգարամա երկիրը գտնվել է «հայ» ցեղանվան, ուրեմն և «Հայկ» անձնանվան հետ կապված Հայասա երկրի մերձավոր հարևանությամբ, ընդունակ է ոչ միայն

<sup>40</sup> Եսեբի Պամփիլեայ Կեսարացու ժամանակակիցը. մասն Բ, Վենետիկ, 1818, էջ 12:

<sup>41</sup> F. Thureau-Daaglin. Une relation de la huitieme campagne de Sargon II, Paris, 1912.

<sup>42</sup> Repertoire geographique des textes cuneliformes, Bd. 6. Die Ortsnamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978, S. 303.

<sup>43</sup> Այսպիսի մոտեցմանը հարում է Ի. Մ. Դյակոնովի այն տեսակետը, թե «Բավական հավանական է, որ սկսած Ասարխազդնի ժամանակից (մ. թ. ա. 680—669 թթ.) մինչև աքեմենյան տիրապետության շրջանը (մ. թ. ա. VI դարի կեսերը—Պ. Ս.) գոյություն է ունեցել մի բավական մեծ, լեզվով՝ հայկական ...թագավորություն, որի կենտրոնն է եղել Մեդիզը ...Հենց այդ թագավորությունն է Աստվածաշնչում անվանված Թորգոմա, Թորգոմա կամ Բեթ-Թորգոմա («Թորգարմայի տուն»—Պ. Ս.)»— Ի. Մ. Дьяконов. Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей.—Вестник древней истории, 1981, № 2, с. 60. Այստեղից բխում է, որ «Տուն Թորգոմայ» թագավորությունը պետք է գոյություն ունենար Աստվածաշնչում նրա հիշատակումից (մ. թ. ա. VI դարի սկզբներին), համենայն դեպս, շուրջ մեկ դար առաջ:

սոսկ ամրապնդելու մեր վերոհիշյալ կղրակացությունները, այլև հիմք ծառայելու Քորզում-Հայկ և Քնկարամա-Հայասոս զույգերի տոկայությունից բխող նոր կղրակացությունների համար:

Ամփոփելով, մենք ցանկանում ենք փորձ անել մոտավորապես վերականգնելու Հայկի և Հայկյանների առասպել-ավանդության զարգացման փուլերը՝ սկսած հնադուրյն շերտերից: Դրանք, մեր կարծիքով, ընդհանուր գծերով, առասպելաբար, արտահայտում են պատմության իրական ընթացքը, էպոսի հաստատվելով սեպարատիստիկ աղյուսների սուլյալներով և, իրենց հերթին, լրացնելով դրանք:

Առաջին փուլ: Հայկը որպես հայերի առասպելական նախնի և անվանադիր (էպոնիմ)՝ զլլաւոր Եղային ստոված, որսորդութեան և աստիղային (աստրալ) աստվածութեան: (Այս վերջին հատկութեանը առիթ և հնարավորութեան է ավել հետագայում նրան հին հունական Օրիոնի հետ համադրելու և Օրիոնի համաստեղութեանը նրա անունով «Հայկ» կոչելու համար): Անունը և առասպելը ծագել են, հավանաբար, հնդկավրոպական ընդհանրաճյուրից հայերի տարանջատվելուց հետո, «հայ» ցեղանվան բյուրեղացման հետ կապված:

Երկրորդ փուլ (մեղ հասած առասպելի մեղ պակասող օղակը): Հայկի շվելը Քնկարամա-Քիզարիմում-Տուն Քորզումայ երկրից և հաստատվելը Հարբում: Ստեղծվել է հավանաբար, մ. թ. ա. II հազ. երկրորդ կեսին—I հազ. սկզբներին, որպես արտացոլում սեպարատիստիկ աղյուսներով մկայված վերը նկարագրված պատմական իրողութեաններին:

Երրորդ փուլ: Հայկի հաղթական պայքարը Միջագետքից ներխուժած բռնակալ Բելի դեմ: Կարող էր ստեղծվել որպես արտացոլում Հայկական լեռնաշխարհի վրա մ. թ. ա. II հազ. վերջերին—I հազ. սկզբներին գիշատիչ Ասորեստանյան տերութեան պարբերական թայանչիական արշավանքների և լեռնաշխարհի բնակչության դիմադրութեան:

Չորրորդ փուլ: Հայկի որդիների շարժումը Հարբի շրջանից արևելյան ուղղութեամբ և Արարատյան դաշտի, Շիրակի, Սևանա լճի ավազանի ու նրանից այն կողմն ընկած հողերի, ինչպես և Վանա լճի ավազանի ու Կորդուքի իրացումը: Կապված է մ. թ. ա. VIII—VI դդ. այն իրադարձութեանների հետ, որոնցով ավարտվում է հայ ժողովրդի կազմավորումը:

Հինգերորդ (աստվածաշնչական թեմաների մակաշերտման) փուլ: Հայկի՝ Բաբելոնում աշտարակաշինութեանը ժամանակակից և մասնաճիւղ լինելը և այնտեղից «Արարադի երկրի» վրայով դեպի Հարբ նրա ուղին: Կապվում է Աստվածաշնչին հայերի ծանոթանալու ժամանակի հետ:

Այսպիսի զարգացման ճանապարհ կարելի է ենթադրել Հայկի և Հայկյանների առասպել-ավանդության համար, մինչև նրա՝ Մովսես Խորենացու և Անունունի-Սեբեոսի երկերում արտացոլվելը:



**«ИСТОРИЯ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ И КЛИНОПИСНЫЕ ИСТОЧНИКИ**

(Проблема историчности и этапов развития легенды о Хайке и Хайкидах)

Академик АНА Г. Х. САРҚИСЯН

Резюме

Подобно всем древним и средневековым авторам, Мовсес Хоренаци не знал о существовании государства Урарту. Тем не менее, в его «Истории Армении» имеется ряд сведений, отражающих события и явления, связанные с этим государством и временем его существования. В наиболее явственной форме эти сведения выступают в главах о строительстве города Ван—столицы Урарту Тушпы, приписанном Мовсесом Хоренаци, вслед за народным преданием, полулегендарной ассирийской царице Шамiram, образ которой проник в местную среду из Ассирии и переплелся с древнейшей армянской легендой об Ара Прекрасном, боге пробуждающейся природы. Далее, такие сведения, по нашему мнению, выступают в легенде-предании о Хайке и первых Хайкидах. Это эпизоды борьбы с месопотамским завоевателем Белом, которые отражают борьбу населения Армянского нагорья с ассирийской агрессией в XIII—VIII вв. до н. э. Кроме того, это эпизоды, связанные с основателем Хайком и его ближайшими потомками восточной части Армянского нагорья, также имеющие историческую основу. Все эти сведения, так или иначе, подтверждаются клинописными (хеттскими, ассирийскими, урартскими) источниками, в свою очередь, дополняют их данные. Вместе с тем, оказывается, что упомянутая легенда-предание со времени своего возникновения претерпела серьезные изменения, в частности, под влиянием Библии. Так, под влиянием легенды о Вавилонском столпотворении и рассеянии после него народов по всему свету, Хайк, в качестве прародителя армян, также оказался в Вавилоне и, тем самым, пришел в Армению вместе со своим родом именно оттуда. По нашему мнению, этим вставным эпизодом из первоначального варианта легенды-предания о Хайке и Хайкидах был вытеснен противоречащий ему другой эпизод, по которому Хайк пришел не из Вавилона, а из страны, упоминаемой в Библии как «Дом Торгома» (Тильгаримму ассирийских, Тогарама хеттских источников), располагавшейся к западу от верхнего течения Евфрата и носившей имя отца Хайка—Торгома. В заключение сделана попытка выделить этапы развития легенды-предания о Хайке и первых Хайкидах со времени ее возникновения и до времени ее отражения в трудах Мовсе́са Хоренаци и Анонима (Сзбеоса).

**MOVSES KHORENATSI'S „HISTORY OF ARMENIA“ AND THE CUNEIFORM SOURCES**

(The Problem of Historicity and Stages of Development of the Legend of Hayk and Haykides)

G. Kh. SARKISJIAN, *Academician of the Academy of Sciences of Armenia*

Summary

Like all ancient and medieval authors Movses Khor natsi also knows nothing about the kingdom of Urartu. Nevertheless, his „History of Armenia“ contains information which reflects events and phenomena connected with this state and the time of its existence. Most clearly this information appears in the chapters dedicated to the construction of the capital city of Urartu—Van, which Movses Khorenatsi, following the folk tradition, ascribed to the semilegendary Assyrian queen Semiramis. Her image has entered the local milieu from Assyria and is interlaced with the

ancient Armenian legend about Ara the Beautiful, the god of the rising nature. Furthermore, as we believe, such information appears in the legend-tradition about Hayk and the first Haykides. These are the episodes about the battle against the Mesopotamian conqueror Bel, which reflected the struggle of the people of the Armenian highland against Assyrian aggression in the XIII–VIII centuries B. C. Besides that, these are the episodes connected with the raiding of eastern part of the Armenian highland by Hayk and his immediate descendants, which also have historical background. This information, in either case, is confirmed by the cuneiform (Hittite, Assyrian, Urartian) sources and in its turn, completes their data. At the same time, the above-mentioned legend-tradition from the time of its creation was seriously modified, in particular, under the influence of the Bible. Thus, under the influence of the legend about Babel and dispersion of peoples around the world, the eponym of Armenians, Hayk, was also located in Babylon and had gone to Armenia with his kin exactly from there. We believe, that this inserted episode has forced out from the original legend-tradition about Hayk and the Haykides the contradictory episode, according to which Hayk came not from Babylon, but from the country attested in the Bible as the „House of Thorgon“ (Tilgarrimmu of Assyrian, Tegarama of Hittite sources), which was located to the west of the upper stream of the Euphrates and carries the name of Hayk's father—Thorgora. In conclusion, we have attempted to distinguish stages of development of the legend-tradition about Hayk and the first Haykides from the time of its creation up to the time of its appearance in the works of Moses Khorenatsi and Anonym (by Sebecos).